

Սուրեն Ա. Մանուկյան
Պատմ. գիտ. թեկնածու

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ***

Բանալի բառեր – ցեղասպանություն, ցեղասպանագիտություն, կանխարգելում, համեմատական ուսումնասիրություններ, գաղութային և կայսերապաշտական քաղաքականություն, Ռ. Լեմկին, ոճրագործներ, զոհաբանություն, միկրոպատմություններ, վերապրողների հուշեր:

Մուտք

Ցեղասպանագիտությունը երիտասարդ գիտաձյուղ է, որը ձևավորվել է 1980–ականներին: Սակայն, ընդամենը քառասուն տարին բավարար էր, որպեսզի այս գիտաձյուղն իր ուրույն տեղը զբաղեցնեք միջգիտակարգային հումանիտար հետազոտական ուղղությունների շարքում¹:

Այս տարիների ընթացքում ցեղասպանագիտության մեջ ձևավորվել են առանձին դպրոցներ, որոնք ցեղասպանություն հանցագործությունն ուսումնասիրում են տարբեր դիտանկյուններից, կիրառվում են տարբեր հետազոտական մեթոդներ, փոխվում են հետազոտողների ուշադրությունը գրավող թեմաները: Դրանց մի մասը նոր է սկսում ուսումնասիրվել, մյուսները վերադառնում են հետազոտության դաշտ և վերարժևորվում, մի մասն էլ, համարվելով ոչ այդքան արդիական, դուրս է մնում ուշադրությունից:

Այս հոդվածի շրջանակում փորձ է արվում վերլուծել ցեղասպանագիտական հետազոտությունների զարգացումը և ներկայացնել ժամանակակից միտումները:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.01.2024:

1 Ցեղասպանագիտության ձևավորման և զարգացման մասին տե՛ս՝ **Մանուկյան Ս.**, Ցեղասպանագիտությունը՝ որպես գիտաձյուղ: Ձևավորման և զարգացման պատմությունը, «ՎԷՆ», Եր., N 3 (67), 2019:

1. Բնորոշման հստակեցման խնդիրը

«Ցեղասպանություն» (genocide) եզրույթը գիտական շրջանառության մեջ է դրել իրավաբան Ռ. Լեմկինը 1944 թ. լույս տեսած իր «Առանցքի երկրների տիրապետությունը օկուպացված Եվրոպայում» գրքում²: Լինելով հրեա՝ նա մանկական հասակից ամերեսվել էր իր ժողովրդի նկատմամբ իրականացված բռնություններին, իսկ ուսանողական տարիներին՝ տեղեկացել հայ երիտասարդ Սողոմոն Թեհլիրյանի կողմից Հայոց ցեղասպանության գլխավոր մեղավորներից մեկի՝ Թալեաթի սպանությանը: Մի ամբողջ ժողովուրդ սպանելու հանցագործության համար իրավական բնորոշման և հետևանքների բացակայության վերաբերյալ նրա մտահոգությունները ծայրահեղ սրվեցին, երբ Հոլոքոստի ժամանակ կորցրեց իր ողջ գերդաստանը: Իրավաբանի մասնագիտությունը ստիպում էր նրան՝ նացիստների գործողություններին տալ իրավական գնահատական, իսկ իր սկզբնական՝ լեզվաբանի մասնագիտությունը հուշում էր, որ հանցանքը կանխելու և այն պատժելու համար անհրաժեշտ է եզրույթ և բնորոշում:

Դա նաև դարձավ իր ստեղծած եզրույթին միջազգային իրավական ուժ տալու հիմնական շարժիչը, երբ, աշխատելով նորաստեղծ ՄԱԿ-ի կողմից ձևավորված հանձնաժողովում, նախ մի քանի այլ գիտնականների հետ կազմեց «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան, իսկ հետո դարձավ այն տարբեր երկրների ներկայացուցիչների կողմից ընդունելու և հետագայում նաև վավերացնելու համար պայքարի առաջամարտիկը³:

Սակայն ընդունման օրվանից Կոնվենցիան⁴ բազմաթիվ քննադատական գնահատականների արժանացավ: Եվ դա բնական է, քանի որ Կոնվենցիան դիվանագիտական կոնսենսուսի արդյունք էր, ուստի և Լեմկինը ստիպված էր որոշ գիշումների գնալ և նախնական տարբերակից ջնջել մի քանի հասկացություններ ու ձեակերպումներ, որոնք ակնհայտորեն չէին արժանանալու շատ պետությունների հավանությանը և կարող էին վտանգի տակ դնել Կոնվենցիայի ընդունման ամբողջ գործընթացը: Ավելին, նույնիսկ իր գործընկերները, որոնց հետ նա մշակում էր Կոնվենցիան, հաճախ համաձայն չէին նրա առաջարկությունների հետ:

2 Տե՛ս **Lemkin, R.**, Axis rule in occupied Europe: laws of occupation, analysis of government, proposals for redress, Clark, N.J., “Lawbook Exchange”, 1943:

3 Ռաֆայել Լեմկինի կյանքի մասին տե՛ս իր ինքնակենսագրությունում **Lemkin R., Frieze D.**, Totally Unofficial: The Autobiography, Yale University Press, 2013:

4 Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, 9 December 1948, <http://www.preventgenocide.org/law/convention/text.htm>, հայերեն տարբերակը տես՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75835> (մուտք՝ 3.11.2023):

Այդպիսի վիճահարույց դրույթներ էին, օրինակ, մշակութային ցեղասպանության հնարավոր ներառումը Կոնվենցիայի մեջ, կամ քաղաքական խմբերի բացառումը թիրախ խմբերի շարքից⁵: Իսկ որոշ բնորոշումներ, բազմաթիվ փոփոխություններից հետո, բավականին անորոշ ու երկիմաստ դարձան⁶:

Ավելին, թեման ուսումնասիրող որոշ գիտնականներ կասկած հայտնեցին. արդյոք ձի՞շտ է պատմական, սոցիոլոգիական կամ մարդաբանական հետազոտություններում կիրառել միջազգային իրավունքի մի բնորոշում, որը հիմնված է քաղաքական համաձայնության վրա, ընդունված հստակ քաղաքական նպատակահարմարությունից՝ հետպատերազմյան աշխարհին բնորոշ միջավայրում⁷:

Սա է պատճառը, որ ցեղասպանագիտության զարգացման առաջին տարիներին շատ գիտնականներ, փորձելով հաղթահարել այդ անորոշությունները և սահմանել իրենց կողմից ուսումնասիրվող երևույթն՝ ավելի ամբողջական տեսքով, սկսեցին ցեղասպանության հանցագործության համար նոր բնորոշումներ առաջարկել⁸: Սակայն ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ դա ոչ միայն չի հստակեցնում խնդիրը, այլև ընդհակառակը՝ ավելի է խճճում ուսումնասիրվող թեման, քանի որ յուրաքանչյուր հետազոտողի համար առաջին պլան էր դուրս գալիս ցեղասպանության այս կամ այն հատկանիշը:

Ավելին, որոշ ցեղասպանագետներ նույնիսկ առաջարկեցին ցեղասպանություն եզրույթից տարբերվող, սակայն նույնպես զանգվածային ոճ-

5 Պահպանվեց միայն ռասայական, կրոնական, էթնիկ և ազգային խմբերի հիշատակումը՝ որպես ցեղասպանության իրականացման թիրախ խմբեր:

6 **Մանուկյան Ս.**, Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի կիրառման հնարավորություններն ու դժվարությունները, «Հայկական քաղաքագիտական հանդես», Եր., N 1(15), 2021, էջ 27-48, **Boghossian P.**, The concept of genocide, “Journal of Genocide Research”, N12 (1-2), 2010, էջ 69-80, **Schabas W.**, Commentary on Paul Boghossian, ‘The concept of genocide’, “Journal of Genocide Research”, N 12 (1-2), 2010, էջ 91-99, **Jacobs, S.L.** Definitions and Concepts of Genocide: Lemkin and the Concept of Genocide, “Multidisciplinary Perspectives on Genocide and Memory” (Lindert, J., Marsoobian, A. (eds), Springer, Cham., 2018:

7 Տե՛ս **Semelin J.**, Around the ‘G’ Word: From Raphael Lemkin’s Definition to Current Memorial and Academic Controversies, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 27:

8 Օրինակների համար տե՛ս **Jones A.**, Genocide. A Comprehensive Introduction, Routledge, 2011, էջ 16-20, Գրքում հեղինակը բերում է տարբեր գիտնականների կողմից առաջարկված Ցեղասպանության 22 այլընտրանքային բնորոշումներ: Սրբո Սթրաուսը նույնպես բերում է 21 տերմինների օրինակներ **Straus S.**, Contested Meanings and Conflicting Imperatives: A Conceptual Analysis of Genocide, “Journal of Genocide Research”, 3(3), 2001, էջ 359-68, **Stein S.**, Conceptions and terms: templates for the analysis of holocausts and genocides , “Journal of Genocide Research”, N 7 (2), 2005, էջ 171-203:

րագործությունները նկարագրող իրենց եզրույթները՝ պոլիտիցիդ, էթնոցիդ, էկոցիդ, գենդերոցիդ, դենոցիդ և այլն⁹:

Այսօր, սակայն, արևմտյան գիտնականները հիմնականում հրաժարվել են այս սովորությունից, և հետազոտողների նոր սերունդն այլևս չի զբաղվում եզրույթի բարելավման տեսական մտավարժանքներով, այլ սեփական հետազոտություններում հիմնվում է Կոնվենցիայի մեջ նշված եզրույթի վրա՝ միաժամանակ ընդունելով, որ դրանում կան մի շարք խնդրահարույց դրույթներ:

Սա առավել կարևոր է, քանի որ, եթե կա ակնկալիք, որ ցեղասպանության ուսումնասիրությունը պետք է նպաստի այդ հանցագործության կանխարգելմանը, ապա դա տեղի է ունենալու ՄԱԿ-ի և նրա անդամ պետությունների կողմից, ինչը նորից առաջին պլան է բերում ՄԱԿ-ի 1948 թվականի կոնվենցիայի կարևորությունը¹⁰, քանի որ դրա հիման վրա է տեղի ունենալու կատարվածի ավստորոշումը:

Եզրույթի շուրջ այս բանավեճն ու հստակեցումները, սակայն, շարունակվում են դեռ այն տարածաշրջաններում, որտեղ ընթանում են զանգվածային սպանությունների համար մեղավորների նկատմամբ դատավարություններ՝ Արգենտինա, Կոլումբիա, Չիլի, Ուրուգվայ, Ռուանդա, Կամբոջա, Բոսնիա-Հերցեգովինա¹¹: Դա օրվա անհրաժեշտությունն է, ուստիև այս դատավարություններն իրենց հերթին օգնում են հստակեցնելու Ցեղասպանության կոնվենցիայի որոշակի անորոշ դրույթներ և դրանով իսկ զարգացնում են արդարադատությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել ուսումնասիրվող դեպքերի շրջանակի ընդլայնումը: Տարբեր գիտնականներ ցեղասպանության համեմատական ուսումնասիրության ոլորտ են բերում զանգվածային սպանությունների հետ առնչվող տարբեր տեսակի հանցագործություններ՝ չսահմանափակվելով այն դեպքերով, որոնք ձանաչվել են որպես ցեղասպանություններ: Օրինակ, ժողովրդագրագիր Ռ. Ռումմելը վերլուծում է «դեմոցիդները», Բ. Հարֆը, ցեղասպանություններից բացի, ուսումնասիրության առարկա է դարձնում նաև պոլիտիցիդները, Մ. Մաննը կենտրոնանում է

9 Տե՛ս **Schaller D.**, From Lemkin to Clooney: The Development and State of Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 251, **Մանուկյան Ս.**, Ցեղասպանությունների գիտական դասակարգումների հարցի շուրջ, «Ցեղասպանագիտական հանդես», 2, 2021, էջ 55–75:

10 Տե՛ս **Bjornlund M., Markusen E., Mennecke M.**, What is Genocide? A Search for Common Grounds between Legal and Non-Legal Definitions, (paper presented at the First International Meeting on Genocidal Social Practices, Buenos Aires, 10–15 November 2003), 2 ըստ **Feierstein D.**, Genocide as Social Practice: Reorganizing Society under the Nazis and Argentina's Military Juntas, New Brunswick, Rutgers University Press, 2014, էջ 241:

11 Տե՛ս օրինակ, **Seibert-Fohr A.**, The ICJ Judgment in the Bosnian Genocide Case and Beyond: A Need to Reconceptualize? *փետրվարի 20*, 2009, <https://ssrn.com/abstract=1342817>:

«մահացու էթնիկ զտումների» (murderous ethnic cleansing) վրա, իսկ, օրինակ, Բ. Վալենտինոն ուսումնասիրության առարկա է դարձնում ցանկացած զանգվածային սպանություն, որին զոհ է գնացել առնվազն հիսուն հազար մարդ՝ հինգ տարվա կտրվածքով¹²:

Մեկ այլ հետազոտական դաշտ, որում տեղի է ունենում վերլուծության շրջանակի ընդլայնում՝ քաղաքական բռնության կամ քաղաքացիական պատերազմների ժամանակ տեղի ունեցող սպանությունների ներառումն է ուսումնասիրությունների մեջ: Տարբեր տեսակի խռովությունները, քաղաքական սպանությունները, կոտորածները, պատերազմների ժամանակ քաղաքացիական բնակչության թիրախավորումը¹³, հակահեղափոխությունը դառնում են ցեղասպանագետների ուսումնասիրության առարկան¹⁴:

Այս միտումը, փաստորեն, բացում է հետազոտական նոր ասպարեզներ, որոնց կենտրոնում է լինելու ցեղասպանության և քաղաքական բռնության այլ ձևերի միջև հարաբերակցությունը¹⁵: Կարևոր է ուսումնասիրել, թե ո՞ր պայմանները կարող են բերել բռնության ծայրահեղ ձևերի, այդ թվում՝ ցեղասպանությունների, ինչպես նաև հետազոտել այն ձևերը, որոնցով ցեղասպանությունն ու քաղաքական բռնության տարբեր դրսևորումները փոխազդում են միմյանց վրա:

Հայտնի է, որ ցեղասպանությունները շատ հաճախ տեղի են ունենում պատերազմների ժամանակ, երբ պայմանները բարենպաստ են նման չափի հանցագործություն իրականացնելու համար: Սակայն երկար ժամանակ անտեսվում էր այն հանգամանքը, թե ինչպես է ցեղասպանությունը դառնում ընդհանուր քաղաքական բռնության ավելի մեծ գործընթացի մաս և հետևանք: Պատերազմների ժամանակ մարդկանց խմբերի միջև թշնամանքն ավելանում է՝ վերածվելով ատելության և, հակառակորդ խմբին ոչնչացնելու միջոցով՝ խնդիրները լուծելու մոլուցքի: Հենց վերնախավերն էլ ընտրում են այդ ծայրահեղական ռազմավարությունները, որոնց իրագործումը հեշտացվում է պատերազմների ժամանակ ամբողջ

12 Տե՛ս **Shaw M., Bartov O.**, The Question of Genocide in Palestine, 1948: An Exchange between Martin Shaw and Omer Bartov, “Journal of Genocide Research”, 2010, 12 (3) էջ. 243–259, **Rummel R.**, Death by Government: Genocide and Mass Murder since 1900, Transaction Publishers: New Brunswick, New Jersey, 1994, **Harff B.**, No Lessons Learned from the Holocaust? Assessing Risks of Genocide and Political Mass Murder since 1955, “American Political Science Review”, N 97 (1), 2003, էջ.57-73, **Harff B., Gurr T.**, Systematic Early Warning of Humanitarian Emergencies, “Journal of Peace Research”, 35 (5), 1998, էջ.551-579, **Mann M.**, The Dark Side of Democracy: Explaining Ethnic Cleansing. Cambridge University Press: Cambridge, 2005; **Valentino B.**, Final Solutions: Mass Killing and Genocide in the Twentieth Century, Ithaca: Cornell University Press, 2004:

13 Տե՛ս, օրինակ **Downes A.**, Targeting Civilians in War, Ithaca: Cornell UP, 2008:

14 Տե՛ս **Finkel E., Straus S.**, Macro, Meso, and Micro Research on Genocide: Gains, Shortcomings, and Future Areas of Inquiry, “Genocide Studies and Prevention”, 2012, N 7 (1), էջ 64:

15 Տե՛ս **Verdeja E.**, On Situating the Study of Genocide within Political Violence, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 81:

պետական ռեսուրսները մոբիլիզացված և պետության ձեռքերում կենտրոնացած լինելու շտրիկով¹⁶:

Այսպես, ցեղասպանությունները տեղավորելով, քաղաքական բռնության ավելի մեծ շրջանակի մեջ, հնարավոր է լինում նաև բացատրել ոչ միայն ցեղասպանությունների պատճառները, այլև հետևանքների մեծ տարբերությունները: Այսինքն, համեմատելով ցեղասպանությունները ոչ ցեղասպանական իրավիճակների հետ (հեղափոխություն, քաղաքացիական պատերազմ, ապստամբական շարժումներ, հակահեղափոխություն), մենք կարող ենք ավելի մեծ գիտելիք ձեռք բերել այն գործոնների մասին, որոնք բերում են խմբերի լայնածավալ ոչնչացմանը¹⁷:

Էրնեստո Վերդեյան արդարացիորեն ցույց է տալիս միայն ճանաչված ցեղասպանությունների ուսումնասիրության էական մեթոդաբանական խնդիրը: «Ուսումնասիրելով միայն այն դեպքերը, որոնք հանգեցրել են ցեղասպանության՝ ինչպե՞ս ենք մենք իմանում, թե արդյոք մեր առաջարկած գործոնները, պատճառահետևանքային դինամիկան և գործընթացները իրականում բացատրում են ցեղասպանությունը: Հնարավոր է, որ այս նույն գործոնները բացատրում են նաև բռնության այլ ձևեր, և, հետևաբար, մենք սխալ ենք ճանաչում ցեղասպանության իրական հիմնարար և հստակ պատճառները: Խնդիրն այն է, որ միայն ցեղասպանություններն ուսումնասիրելիս մենք, ամենայն հավանականությամբ, ընտրում ենք միայն այն դեպքերը, որոնք հաստատում են մեր տեսական ենթադրություններն այն մասին, թե արդյոք մեր նախատեսած մեխանիզմներն իսկապես առաջնային պատճառահետևանքային գործոններ են»¹⁸:

2. Ռաֆայել Լեմկինի և նրա աշխատանքների նկատմամբ հետաքրքրության աճը

Թեև Լեմկինը ցեղասպանություն եզրույթի և հասկացության հեղինակն էր, սակայն երկար տարիների ընթացքում նրա կյանքը, գործու-

16 Պատերազմի և ցեղասպանության միջև կապի մասին տե՛ս **Shaw M.**, War & Genocide, Cambridge: Polity Press, 2003, **Browning Ch.**, The Origins of the Final Solution: The Evolution of Nazi Jewish Policy, September 1939-March 1942, Lincoln, NE: University of Nebraska Press, 2004, **Straus S.**, The Order of Genocide: Race, Power and War in Rwanda, Ithaca, NY: Cornell UP, 2006, **Bloxxham D.**, The Armenian Genocide of 1915-1916: Cumulative Radicalization and the Development of a Destruction Policy, “Past and Present”, 181, 2003, էջ 141-92, **Shaw M.**, The New Western Way of War: Risk-Transfer War and its Crisis in Iraq, Polity, 2005, **Bergen D.** War and Genocide: A Concise History of the Holocaust, Rowman & Littlefield, 2016:

17 Տե՛ս **Verdeja E.**, On Situating the Study of Genocide within Political Violence, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), էջ.81-82:

18 **Verdeja E.**, On Situating the Study of Genocide within Political Violence, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 83:

նեությունը և աշխատանքները մոռացված մնացին: Նույնիսկ 1959 թ. նրա թաղման արարողությանը մասնակցեցին ընդամենը մի քանի հոգի՝ եզակի թվով ընկերներ և երկու դիվանագետ, որոնց հետ ինքն առնչվել էր ՄԱԿ-ում աշխատելու տարիներին:

Զարմանալի է, բայց Լեմկինը մոռացության էր մատնված շատ երկար ժամանակ, և նույնիսկ 1980-1990-ականներին, երբ ցեղասպանագիտություն գիտաձյուղի բուռն զարգացման շրջանն էր, նա դուրս մնաց ուսումնասիրությունների շրջանակից:

Սակայն վերջին տարիներին տեղի է ունենում նրա ժառանգության նկատմամբ հետաքրքրության աճ: Հրատարակվեցին բազմաթիվ գրքեր, որոնց շարքում ամենանշանավորը, իհարկե, ավստրալիացի հետազոտող Դոննա-Լի Ֆրիզի կողմից խմբագրված՝ Ռաֆայել Լեմկինի անտիպ ինքնակենսագրությունն է, որը լույս տեսավ 2013 թվականին¹⁹: Հետագայում նրա կենսագրությանն անդրադարձավ նաև Դուգլաս Իրվին-Էրիքսոնը²⁰: Սթիվեն Ջեյքոբսն իր հերթին հրատարակման պատրաստեց Լեմկինի մեկ այլ անավարտ աշխատանք: Լեմկինը փորձում էր ամբողջացնել ցեղասպանությունների երկհատոր պատմությունը, որում պետք է ներկայացվեին մարդկության պատմության ընթացքում տեղի ունեցած ցեղասպանական բոլոր դեպքերը: Ջեյքոբսը, հիմնվելով Լեմկինի թղթերի վրա, կազմեց դրանց քննական հրատարակությունը²¹: Լեմկինի մասին վերջին տարիներին գրված գրքերի թիվը շատ մեծ է²²: Նրանց մեջ կա նաև Հայաստանում արված հետազոտություն, որում Նարեկ Պողոսյանը վերլուծում է հայկական հետքը, առնչությունները Լեմկինի աշխատանքում²³: Չափազանց արժեքավոր է Դոմինիկ Շալլերի և Յուրգեն Ցիմերմանի խմբագրությամբ ժողովածուն, որտեղ ոչ միայն փորձ է արվում գնահատել Լեմկինի իրավական ժառանգությունը, այլև քննել զանգվածային սպանությունների պատ-

19 Տե՛ս **Lemkin R., Frieze D.**, *Totally Unofficial: The Autobiography*, Yale University Press, 2013:

20 Տե՛ս **Irvin-Erickson D.**, *Raphael Lemkin and the Concept of Genocide*, Pennsylvania Studies in Human Rights, 2016:

21 Տե՛ս **Jacobs S.**, *Lemkin on Genocide*, Lexington Books, 2012:

22 Օրինակներից են **Cooper J.**, *Raphael Lemkin and the Struggle for the Genocide Convention*, Palgrave Macmillan, 2008, **MUSIC E.**, *Raphael Lemkin and His Struggle for the Recognition of Genocide by International Law*, GRIN Verlag, 2017, **Madajczyk P.**, *The Biographical Landscapes of Raphael Lemkin*, Taylor & Francis, 2023: Ցեղասպանագիտական մի քանի հանդեսներ նվիրեցին Լեմկինին առանձին համարներ՝ «*Journal of Genocide Research*», N 7(4), 2005, «*Genocide Studies and Prevention*», N 13 (1), 2019:

23 Տե՛ս **Պողոսյան Ն.**, Հայոց ցեղասպանության խնդիրը Ռաֆայել Լեմկինի ուսումնասիրություններում, Երևան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, 2020:

մաքանի նրա ներդրումը: Ընդ որում՝ այդ քննությունը որոշ հարցերում վեր է ածվում քննադատության²⁴:

Այս հետաքրքրությունը Լեմկինի նկատմամբ թույլ է տալիս որոշ եզրակացությունների հանգել. նրա ժառանգությունն, իրոք, հսկայական է, և նրա աշխատանքների նոր ընթերցումը բազմաթիվ հետաքրքիր գաղափարներ է ծնում: Միաժամանակ սկսում է առաջանալ մի երևույթ, որը որոշ ցեղասպանագետներ (օրինակ՝ Հենրի Թերյոն) սկսում են անվանել «Լեմկինյան ֆունդամենտալիզմ (արմատականություն)», երբ այսօրվա գիտական ցանկացած զարգացում արդարացվում է Լեմկինի հեղինակությանը հղում կատարելով²⁵:

Սակայն դա որոշ չափով մտահոգիչ միտում է, քանի որ յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իրեն բնորոշ համատեքստն ու ընկալումները, և Լեմկինի ժամանակվա գիտելիքներն ու միջավայրն անհամատեղելի էին գիտության զարգացման այսօրվա չափանիշների հետ:

Նաև՝ Լեմկինի պատկերացումները ցեղասպանության մասին սահմանափակվում էին մինչև 1944 թ. տեղի ունեցած ցեղապանություններով: Սակայն, ցավոք, աշխարհը դրանից հետո էլ ակնառես է եղել բազմաթիվ նման գործողությունների: Այս նոր ցեղասպանություններն իրենց հետքերում են այս հին հանցագործության նոր հատկանիշներ և որակներ²⁶:

3. Բազմազանության ավելացումը

Իր ձևավորման առաջին շրջանում ցեղասպանագիտությունը զարգանում էր հիմնականում ԱՄՆ-ում: Հիմնադիր հայրերը կամ գիտնականները, ովքեր զբաղվում էին ցեղասպանությունների ուսումնասիրությամբ, հենց այդ երկրից էին: Սա մի կողմից հեշտացնում էր նոր գիտաճյուղի ձևավորման ընթացքը, քանի որ բոլոր հետազոտողները խոսում էին նույն լեզվով, նույն ակադեմիական միջավայրից էին և գրեթե՝ նույն քաղաքական մշակույթի կրողներ: Նրանք համալստիներ էին և իրենց հետազոտությունները, մեծ հաշվով, նույնպես ուղղված էին առաջին հերթին ամերիկյան հասարակությանը: Սա թույլ տվեց բավականին արագ ստեղծել գիտաճյուղի հիմքերը և ձևավորել միասնական գիտական համայնք: Իհարկե, տարբեր հետազոտողներ կարող էին լրիվ տարբերվող մոտեցումներ ունենալ

24 Տե՛ս The Origins of Genocide, Raphael Lemkin as a Historian of Mass Violence (ed. Schaller D., Zimmerer J.), London: Routledge, 2009:

25 Տե՛ս Theriault H., Against the Grain: Critical Reflections on the State and Future of Genocide Scholarship, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 124:

26 Տե՛ս Theriault H., Genocidal Mutation and the Challenge of Definition, “Metaphilosophy”, N 41(4), 2010, էջ 487–8:

շատ հարցերի շուրջ, սակայն հետազոտություն իրականացնելու, գիտական էթիկայի արդյունքները հրապարակելու և դրանք արժևորելու վերաբերյալ նրանց պատկերացումները նույնական էին²⁷:

Այսօր իրավիճակն այլ է: Ցեղասպանագիտական ուսումնասիրությունները ոչ միայն ընդգրկեցին այս հարցերի հետազոտությամբ զբաղվող կանադական շատ ակտիվ համայնքը, այլև տարածվեցին աշխարհի այլ մասեր ևս: Եվրոպական երկրներում բացվեցին ցեղասպանության ուսումնասիրման կենտրոններ: Արագ զարգացում ապրեցին արգենտինական, ավստրալիական, ֆրանսիական, բրիտանական մրցակցող դպրոցները: Իսրայելում նույնպես տեղի ունեցավ այն գիտնականների խմբի բյուրեղացումը, ովքեր անջատվեցին Հոլոքոստի նեղ ուսումնասիրման ոլորտից և սկսեցին քննարկել նաև այլ ցեղասպանությունների պատմություններին և տեսությանը վերաբերող հարցեր: Իր ձևավորման կարծես վերջնական փուլում է գտնվում հայկական դպրոցը: Վերջինս տարբերվում է խորհրդահայ դպրոցից, թեև, իհարկե, առատորեն յուրացրել և կիրառում է նրա նվաճումները:

Ստեղծված պայմաններում ակադեմիական ավանդույթները սկսում են տարբերվել երկրից երկիր, երևույթի նկարագրության համար կիրառվում են տարբեր լեզուներ, տարբերվում են աղբյուրները, որոնք օգտագործվում են հեղինակների կողմից:

Չկա նույնիսկ հիշողության գլոբալ պատկեր: Հիմնադիր հայրերը, լինելով հիմնականում Հոլոքոստը վերապրածներ, կիսում էին Հրեից ցեղասպանության կենտրոնական դերի մասին պատկերացումները: Հետո նրանց միացան հայ ուսումնասիրողները, որոնց համար Հայոց ցեղասպանությունն իրենց սեփական ընտանեկան պատմության մի մաս էր²⁸, սակայն նոր սերունդի համար Ռուանդայի կամ Դարֆուրի բռնություններն ավելի էական են, քանի որ տեղի են ունեցել իրենց օրոք:

Այս առումով կարևոր թեմաներից է դառնում Արցախի և այլ դեպքերի քննության ակտիվացումը: Ոչ միայն հայ, այլև օտարերկրյա գիտնականներն իրենց ուսումնասիրություններում օգտագործում են Արցախի օրինակը՝ որպես 21-րդ դարում տեղի ունեցած ցեղասպանական գործողություն, որպես հյուծման միջոցով խմբի նկատմամբ էթնիկ զտում իրականացնելու մարտավարության դեպք, խմբի մշակութային ժառանգության ոչնչացման կամ յուրացման օրինակ:

Միաժամանակ, այս ամբողջ տարբերությամբ հանդերձ, բոլոր դպրոցները կիրառում են նույն «խաղի կանոնները», որոնք դեռ շարունա-

27 Տե՛ս **Zimmerer J.**, From the editors: towards transnational genocide studies: recent trends and future developments in genocide research, “Journal of Genocide Research”, N 8 (1), 2006, էջ 3–5:

28 Տե՛ս օրինակ, ցեղասպանագետների ինքնակենսագրությունների ժողովածուն՝ *Pioneers of Genocide Studies* (ed. by **Totten S., Jacobs S.**), Routledge, 2002, 2013:

կում են թելադրվել արևմտյան ակադեմիական միջավայրի, հիմնականում ԱՄՆ-ի համալսարանների և Արևմուտքում տպագրվող՝ բարձր ազդեցության գործակցով հանդեսների կողմից:

Այս առումով Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը, բնականաբար, նույնպես ունի իր առանձնահատկությունները, թեև նրա տարբերությունները ցեղասպանագիտությունից ավելի փոքր են, քանի որ ցեղասպանագիտության և Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը, որպես գիտաձյուղ, ձևավորվել են գրեթե միաժամանակ՝ ժամանակային շատ փոքր տարբերությամբ²⁹:

4. Տարբեր ոլորտների ներգրավումը

Բացի աշխարհագրական և ազգային բազմազանությունից, ցեղասպանագետները տարբերվում են նաև այն մասնագիտություններով, որոնցում ստացել են իրենց կրթությունն ու գիտական աստիճանները և գիտական հետազոտության բնագավառներով, որտեղից մուտք են գործել նոր գիտաձյուղ՝ ցեղասպանագիտություն:

Ցեղասպանագիտությունն ի սկզբանե միջգիտակարգային ոլորտ էր, քանի որ երևույթն ուսումնասիրելու ընթացքում նախատեսում էր տարբեր գիտաձյուղերի հատումը: Ցեղասպանությունների ուսումնասիրությունը հնարավոր չէ, եթե այն ամփոփված է միայն մի գիտաձյուղի մեջ:

Ինչպես նշում է ֆրանսացի պատմաբան և քաղաքագետ Ժաք Սեմելինը՝ նույնիսկ առանձին վերցված «կոտորածն» ինքնին այնքան բարդ է որպես երևույթ, որ պահանջում է բազմամասնագիտական քննություն՝ ոչ միայն պատմաբանի, այլև հոգեբանի, մարդաբանի և այլ մասնագետի տեսանկյունից³⁰:

Ե՛վ օգտագործվող աղբյուրները, և՛ ուսումնասիրության կիրառվող մեթոդները վերաբերում են տարբեր գիտությունների՝ պատմությանը, սոցիոլոգիային, իրավունքին, քաղաքագիտությանը, հոգեբանությանը, նույնիսկ՝ տնտեսագիտությանը, գրականագիտությանը, բժշկությանը, փիլիսոփայությանը, կրոնագիտությանը և այլն, ինչը և թույլ է տալիս ավելի ձգգրիտ հասկանալ ցեղասպանության ամբողջ էությունը:

Այն նաև ակտիվորեն փոխհարստացվում է միջգիտակարգային այլ ուղղությունների՝ մշակութաբանության, բնիկների հետազոտության (indigenous studies), գենդերային հետազոտությունների (gender studies), բարոյական փիլի-

29 Տե՛ս **Manukyan S.**, The historiography of the Armenian Genocide, “Handbook of Genocide Studies” (ed. by **Simon D., Kahn L.**), Edgar Elgar Publishing, 2023, էջ 54–71:

30 Տե՛ս **Sémelin J.**, Purify and Destroy: The Political Uses of Massacre and Genocide, New York: Columbia University Press, 2007, էջ 5:

սովայության (moral philosophy), սփյուռքի ուսումնասիրությունների (diaspora studies) արդյունքում: Ավելին, գիտնականներից բացի, նրա մեջ ակտիվորեն ներգրավվում են նաև արվեստագետներ, գրողներ, թատերագիրներ³¹, որոնք փորձ են կատարում վերլուծել, հասկանալ և արվեստի լեզվով փոխանցել ցեղասպանության ամբողջ սարսափը:

Հենց այդ տրամաբանությամբ են կազմվում ոլորտի համար շատ բնորոշ հատորները, որոնց հեղինակները տարբեր մասնագիտությունների տեր գիտնականներ են, ինչի շնորհիվ ցեղասպանությունը քննության է առնվում տարբեր գիտությունների դիտանկյունից: Նույն պատկերն է ոլորտի առաջատար հանդեսներում, որտեղ կարելի է գտնել տարբեր գիտությունների ծիրում իրենց ուսումնասիրությունն իրականացնող մասնագետների հոդվածներ: Այս միտումը կարելի է տեսնել՝ վերջերս հրատարակված նման ժողովածուներում³²: Հայոց ցեղասպանության վերաբերյալ ժողովածուները նույնպես փորձում են ապահովել նման բազմազանություն³³:

Այս բազմագիտակարգային մոտեցումը նաև ստիպում է համատեղ հետազոտություններ իրականացնել: Եվ սա չափազանց ողջունելի է, քանի որ գիտությունների բաժանումը, վերջին հաշվով, վերացական հասկացություն է, և նրանց միջև սահմանները հաճախ արհեստական են գծված:

Այսպիսով, կարելի է խոսել ցեղասպանագիտության բազմագիտակարգային լինելու մասին: Այս միտումը դրվել էր ոլորտի զարգացման հիմքում հենց հիմնադրման օրվանից և շարունակում է արդիական մնալ նաև հիմա:

5. Համեմատական ցեղասպանագիտություն

Ժամանակակից ցեղասպանագիտության կարևորագույն ոլորտներից է շարունակում մնալ համեմատական ցեղասպանագիտությունը, երբ ուսումնասիրությունը կենտրոնանում է մեկից ավելի դեպքերի քննության, դրանց միջև առկա ընդհանրությունների ու տարբերությունների վրա, ինչի

31 Տե՛ս **Schimmer R.**, Tracking Evidence of Genocide through Environmental Change: How Remote Sensing Can Be Applied to the Study of Genocide, “New Directions in Genocide Research” (ed. **Jones A.**), London: Routledge, 2011, **Jones A.**, Diffusing Genocide Studies, Defusing Genocides, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 274:

32 Տե՛ս օրինակ Genocide. Key Themes (ed. by **Bloxham D., Moses D.**), Oxford University Press, 2022, Genocide: The Power and Problems of a Concept (ed. by **Graziosi A., Sysyn F.**), McGill-Queen's Press, 2022:

33 Տե՛ս օրինակ The Genocide of the Christian Populations in the Ottoman Empire and its Aftermath (1908-1923) (ed. by **Akçam T., Kyriakidis T., Chatzikyriakidis K.**), Taylor & Francis, 2023, Collective and State Violence in Turkey: The Construction of a National Identity from Empire to Nation-State (ed. by **Astourian S., Kévorkian R.**), Berghahn Books, 2020:

միջոցով հնարավոր է լինում ավելի ամբողջապես բացահայտել ցեղասպանություն երևույթի էությունը:

Համեմատական ցեղասպանագիտությունը սկսել է զարգանալ որպես Հոլոքոստի եզակիության դրույթի պատասխան և իր ամուր տեղն է զբաղեցրել գիտաճյուղի քարտեզի վրա: Ավելին, գոյություն ունի նույնիսկ միջազգային գիտական հանդես, որն իր ստեղծման առաքելությունն է հայտարարել հենց համեմատական ուսումնասիրությունների իրականացումը: Խոսքը “Journal for Genocide Research” հանդեսի մասին է, որն իր առաջին համարից սկսած՝ ընդգծում է այդ առանձնահատկությունը³⁴:

Համեմատական ցեղասպանագիտության ոլորտի ուսումնասիրությունները թույլ են տալիս լուծել մի քանի խնդիր: Նախ՝ խուսափել թեմայի դոգմայացումից և կրկնություններից. վտանգներ, որոնք պարզ երևացին Հոլոքոստի պարագայում³⁵: Համեմատական ցեղասպանագիտությունը նաև միջազգային ակադեմիական գիտություն է ներմուծում ոչ միայն արդեն ձևաչված ցեղասպանությունները, այլև նվազ ծանոթ ցեղասպանական դեպքերը և նույնիսկ նրանք, որոնք, միգուցե, միջազգայնորեն ձևաչված ցեղասպանության անվանում չեն ստացել: Եվ, բացի այդ, հնարավորություն է ստեղծվում խուսափել ցեղասպանության էթնիկացումից (ethnoization of genocide studies), երբ գիտնականները սկսում են ուսումնասիրել միայն սեփական ժողովրդի դեմ կատարված ռճիրը: Վերջինը կարող է բերել նաև հետազոտության զգացմունքայնության՝ զոհաբանության և չափազանցված դատողությունների, որոնք ժամանակի ընթացքում կարող են տանել դեպի թերի և նույնիսկ հակագիտական եզրակացություններ³⁶:

Իսկ երբ համեմատության մեջ են դրվում թեև նույնաբովանդակ, սակայն տարբեր միջավայրերում, տարբեր երկրներում, ժամանակաշրջանում և պայմաններում տեղի ունեցած երևույթներ, ապա այդ ֆենոմենի վերաբերյալ վերլուծությունը հնարավորություն է տալիս ավելի բազմակողմանի և էական արդյունքներ արձանագրել:

Անհրաժեշտություն է առաջանում դուրս գալ միայն մեկ օրինակի հետազոտության շրջանակից և փորձել իրադարձությունը դիտարկել ավելի լայն համատեքստում: Դուրս բերելով թեման միայն հայերի, հրեաների կամ ցեղասպանության զոհ դարձած ցանկացած այլ ժողովրդի «մենաշնորհը» դիտարկելու ծուղակից՝ ավելի է ընդգծվում նրա՝ որպես համամարդկային գլոբալ երևույթի կարևորությունը:

34 Տե՛ս From the editor: Apologia rationalis, “Journal of Genocide Research”, N 1(1), 1999, էջ 7-10:

35 Տե՛ս The eagles and the worms: On the future agenda of genocide studies, “Journal of Genocide Research”, N 3(3), 2001, էջ 346:

36 Տե՛ս From the editor: new directions, “Journal of Genocide Research”, N 7(2), 2005, էջ 169-170:

Սակայն պետք է ընդունել նաև, որ համեմատական ցեղասպանագիտությունը գերծ չէ որոշ խնդիրներից: Դրանք նախ մեթոդաբանական են, քանզի դժվար է գտնել մեկ միասնական հետազոտական մեթոդ տարբեր միջավայրերում, տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած դեպքերը քննելու համար, և գիտնականները խիստ բանավեճի մեջ են հենց համեմատելու սկզբունքների շուրջ:

Բացի այդ, ինչպես գրում էր Լեո Քուպերը, դժվար է գտնել ցեղասպանության մեկ ընթացք. «Ցեղասպանության ձևերը չափազանց բազմազան են՝ գործողությունների միանգամայն տարբեր հաջորդականությամբ և մասշտաբների մեծ տարբերություններով, որոնք առաջացնում են տարբեր «լոգիստիկ» խնդիրներ»³⁷: Շերի Ռոզենբերգը երկրորդում է նրան՝ նշելով, որ տեխնոլոգիական բարդությունը, գոհերի աշխարհագրական կենտրոնացումը, բյուրոկրատական արդյունավետությունը և փոխադարձ բռնության հնարավորությունը մի քանի փոփոխականներն են, որոնք տարբերում են մեկ ցեղասպանությունը մյուսից և թույլ չեն տալիս ցեղասպանության գործընթացի համեմատելի գծային մոդելով³⁸:

Վերջապես, համեմատական ցեղասպանագիտությունը բախվում է հետազոտության իրագործելիության բարդությունների հետ: Հաշվի առնելով տարբեր ցեղասպանությունների իրականացման վայրերի հեռավորությունը, տեղական լեզուների բազմազանությունը՝ չափազանց դժվար է պատկերացնել, որ հնարավոր կլինի գտնել շատ մասնագետներ, ովքեր բավականաչափ գիտելիքներ կունենան մեկից ավելի ցեղասպանության վերաբերյալ: Դրանցից մեկը միշտ լինելու է գերիշխող, քանի որ հեղինակն ավելի տեղեկացված է լինելու հենց այդ դեպքի մասին:

Սակայն, նույնիսկ այս խնդիրներով հանդերձ, պետք է ընդունել, որ այսօր համեմատական վերլուծությունը բավականին արդյունավետ և կարևոր գործիք է և Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում կարող է շատ լավ պտուղներ տալ: Դրա մասին են վկայում արդեն իսկ գոյություն ունեցող մի քանի հաջողված օրինակներ: Առաջինը Ռոբերտ Մելսոնի «Հեղափոխություն և ցեղասպանություն. Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի ծագման մասին» գիրքն էր, որտեղ հեղինակը³⁹ համեմատում է Օսմանյան կայսրությունում և նացիստական Գերմանիայում հայերի ու հրեաների կարգավիճակը, երկու երկրներում հեղափոխական իշխանափոխություն-

37 **Kuper L.**, Genocide: Its Political Use in the Twentieth Century, New Haven, Conn.: Yale University Press, 1981, էջ 101:

38 Տե՛ս **Rosenberg Sh.**, Genocide Is a Process, Not an Event, “Genocide Studies and Prevention”, N 7(1), 2012, էջ 18:

39 Տե՛ս **Melson R.**, Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust, Chicago: University of Chicago Press, 1992:

ների արդյունքում տեղի ունեցած քաղաքական ու հասարակական փոփոխությունները: Ըստ նրա՝ դեպի ցեղասպանություն տանող ճանապարհը սկսվում է, երբ հեղափոխականները, վերացնելով հին վարչակարգը, փորձում են նոր հասարակություն արարել, որը պետք է ձգգրիտ կերպով համապատասխանի իրենց գաղափարախոսական չափանիշներին:

Մեկ այլ հաջողված օրինակ է Դեբորա Մեյերսոնի «Ցեղասպանության ճանապարհին. վերաքննելով Հայաստանի ու Ռուանդայի օրինակը» գիրքը⁴⁰:

Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի համեմատությունն իրականացնելով՝ Վահագն Դադրյանը ձգտում էր լուծել իր ժամանակի համար մի շատ կարևոր հարց՝ Մեծ Եղեռնի թեման բերել գիտական դաշտ և ամրապնդել դրա՝ ցեղասպանություն լինելու հիմքերը՝ հենվելով Հրեից ցեղասպանության բանավեճից դուրս լինելու դրույթի վրա: Նա բավականին մանրամասն է ուսումնասիրել երկու ցեղասպանությունների նմանություններն ու տարբերությունները՝ երկու ժողովուրդների փոքրամասնության կարգավիճակը, նրանց հետապնդումների պատմությունը, նրանց ոչնչացնելու մեջ՝ նացիստական և երիտթուրքական քաղաքական կուսակցությունների վճռորոշ դերը: Հետագայում Դադրյանն այս համեմատության մեջ սնոցրեց նաև Ռուանդայի ցեղասպանությունը⁴¹: Այս երկու դեպքերն ուսումնասիրել է նաև հայ հետազոտող Տիգրան Մաթոսյանը⁴²:

Մեկ այլ հետաքրքիր օրինակ է Բեն Քիրնանի աշխատանքը: Նրա մտադրությունները շատ նման էին Դադրյանի շարժառիթներին: Սկսելով ուսումնասիրել Կամբոջայում տեղի ունեցած դեպքերը՝ նա նույնպես խնդիր էր դրել հիմնավորել դրանց ցեղասպանական լինելու հանգաման-

40 Տե՛ս **Mayersen D.**, On the Path to Genocide: Armenia and Rwanda Reexamined, New York: Berghahn, 2014:

41 Տե՛ս **Dadrian V.**, Common Features of the Armenian and Jewish Cases of Genocide: A Comparative Victimological Perspective, “Victimology: A New Focus” (ed. **Drapkian I.**), N 4, Violence and Its Victims. Lexington, MA: D.C. Health and Co., 1975, էջ 99-120, **Dadrian V.**, Some Determinants of Genocidal Violence in Inter-group Conflicts—with Particular Reference to the Armenian and Jewish Cases, “Sociologist”, N 26 (3), 1976, էջ 130-149, **Dadrian V.**, The Convergent Aspects of the Armenian and Jewish Cases of Genocide: A Reinterpretation of the Concept of Holocaust, “Holocaust and Genocide Studies”, N 3 (2), 1988, էջ 151-169, **Dadrian V.**, The Comparative Aspects of the Armenian and Jewish Cases of Genocide: A Sociohistorical Perspective, “Is the Holocaust Unique?” (ed. **Rosenbaum A.S.**), Boulder, CO: Westview Press, 1996, էջ 101-135, **Dadrian V.**, Patterns of Twentieth Century Genocides: The Armenian, Jewish, and Rwandan Cases, “Journal of Genocide Research”, N 6 (4), 2004, էջ 487-522:

42 Տե՛ս **Մաթոսյան Տ.**, Հայոց ցեղասպանություն և հրեական Հոլոքոստ. Համեմատման փորձ, Եր., 2005:

քը, և նորից այդ նպատակի համար ընտրվել էր Հոլոքոստը⁴³: Նա, սակայն, բախվել էր ավելի դժվար խնդրի հետ, քանի որ Կամբոջայում սպանությունները տեղի էին ունենում հիմնականում քաղաքական նկատառումներով, և թիրախ խումբը հիմնականում այլ էթնիկ, ազգային, կրոնական կամ ռասսայական խումբ չէր: Քիրնանը, սակայն, այդ համեմատությունը դրեց ավելի մեծ շրջանակի մեջ՝ Հոլոքոստը և Հայոց ցեղասպանությունը համեմատելով Կամբոջայում տեղի ունեցած սպանությունների և այլ զանգվածային քաղաքական հաշվեհարդարների՝ Ինդոնեզիայում կոմունիստների ջարդերի և Արևելյան Թիմորի անկախության համար պայքարի ընթացքում իրականացված բռնությունների հետ⁴⁴:

Ինչպես տեսնում ենք, համեմատական ցեղասպանագիտությունը ինքնին հարված էր Հոլոքոստի եզակիության դրույթին, և վերջինիս կողմնակիցներն այդքան էլ մեծ ոգևորությամբ չընդունեցին նման զարգացումը:

Գոյություն ունի այն պատումը, որ, առանց նացիստների կողմից եվրոպացի հրեաների և այլ խմբերի ոչնչացման փորձի, Լեմկինի կողմից դժվար թե ստեղծվեր «Ցեղասպանություն» (Genocide) բառը, և ցեղասպանագիտության ոլորտը կարող էր գոյություն չունենալ: Լեմկինը, թեև զբաղվում էր խմբերի ոչնչացման հարցով, սակայն նրա ջանքերը կարող էին մնալ միայն նեղ ակադեմիական դաշտում: Նա կարող էր մոռացված մարդ լինել, և, նկարագրելով այդ հանցագործությունը, մենք կկիրառեինք միայն «բնաջնջում» և «մարդկության դեմ հանցագործություն» բնորոշումները: Հետևաբար, չէր լինի ՄԱԿ-ի կողմից ընդունված ցեղասպանության կոնվենցիան, և ոչ էլ՝ ցեղասպանական ուսումնասիրությունները⁴⁵:

Ավստրալացի պատմաբան Դրոք Մոզեսը բերում է իսրայելցի պատմաբան Օմեր Բարթոլի օրինակը, ով պնդում է, որ այլ ցեղասպանությունները հանրության ու գիտնականների ուշադրության կենտրոնում հայտնվեցին Հոլոքոստի՝ որպես մեծ պատմական իրադարձության ի հայտ գալու շնորհիվ և ավելին՝ Հոլոքոստն այն իրադարձությունն էր, որը բյուրեղացրեց ցեղասպանության առավել ամբողջական սահմանումը և պատճառ դարձավ դրա իրավական բնորոշման ընդունման համար⁴⁶: Բարթոլն իր դրույթի հաստատման համար բերում է ցեղասպանագիտության գիտաձյուղի հիմնադիր հայրերից մեկի՝ Լեո Քուպերի խոսքերն այն մասին,

43 Տե՛ս **Kiernan B.**, Twentieth-Century Genocide: Underlying Ideological Themes from Armenia to East Timor, “The Specter of Genocide: Mass Murder in Historical Perspective” (ed. by **Gellately R., Kiernan B.**), Cambridge: Cambridge University Press, 2003, 29–50:

44 Տե՛ս **Feierstein D.**, Leaving the Parental Home: An Overview of the Current State of Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, 6 (3), 2011, էջ 261:

45 Տե՛ս **Hinton A.**, Critical Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 7:

46 Տե՛ս **Bartov O.**, Genocide and the Holocaust: Arguments over History and Politics, “Lessons and Legacies XI: Expanding Perspectives on the Holocaust in a Changing World”, 2014, էջ 9:

որ «նացիստների կողմից ժողովուրդների ոչնչացումներն են, որ խթան հանդիսացան ցեղասպանության՝ որպես հանցագործություն միջազգային իրավունքի կողմից պաշտոնական ճանաչման համար»⁴⁷:

Սակայն Մոզեսը հակադարձում է նրան՝ նշելով, որ Քուպերի հեղինակությանը հղում կատարելն այդքան էլ ձիշտ չէ, քանի որ վերջինս գրում է ընդհանրապես ժողովուրդների սպանության մասին և ոչ թե կենտրոնանում հենց հրեաների վրա: Ավելին, այդ ժամանակ Հոլոքոստի կամ հրեաների ցեղասպանության մասին դրույթն ավելի քիչ էր շեշտվում, քան դա արվում է պատմաբանների կողմից այսօր, և ՄԱԿ-ի կողմից «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ընդունման համար այն խթան չէր հանդիսանում⁴⁸:

Եվ, ընդհանրապես, վերջին տարիներին Հոլոքոստի եզակիության դրույթն ավելի քիչ է գործածվում⁴⁹: Հետաքրքիր է, որ ժամանակակից խոշոր ցեղասպանագետներից շատերը ոլորտ են մուտք գործել հենց Հոլոքոստի ուսումնասիրությունից, ինչպես, օրինակ, Դոնալդ Բլոքսհամը, Ժաք Սեմելինը, Դերք Մոզեսը, Նորման Սթոունը, որոնք, սակայն, ժամանակի ընթացքում դարձել են երևույթի ավելի լայն ուսումնասիրության կողմնակիցներ: Ամենավառ կերպով այս փոփոխությունը բնութագրում է Բլոքսհամի գրքի անունը՝ *The Final Solution: A Genocide* («Ցեղասպանություն. վերջնական լուծումը»)՝ Սովորաբար, խոսելով վերջնական լուծման մասին, ի նկատի էր առնվում հենց Հոլոքոստը, քանի որ այս նորաբանությունն օգտագործվում էր հենց ռճրագործների կողմից՝ քողարկելու մի ամբողջ ժողովրդի ծրագրված սպանդը: Իսկ Բլոքսհամն այս վերջնական լուծում եզ-

47 **Kuper L.**, *Genocide: Its Political Use in the Twentieth Century*, New Haven, Conn.: Yale University Press, 1981, էջ 20:

48 Տե՛ս **Moses D.**, Raphael Lemkin, Culture, and the Concept of Genocide, *The Oxford Handbook on Genocide Studies* (**Bloxham D., Moses A.**), New York, Oxford University Press, 2010, 19–41:

49 Խոսքը, իհարկե, գիտական դաշտի մասին է, քանի որ մենք ականատես եղանք, երբ Եվրոպայի 50 հրեա ռաբբիներ վերջերս մի ամոթալի նամակ տարածեցին՝ ուղղված ՀՀ նախագահին կոչ անելով չօգտագործել Հոլոքոստի հետ առնչվող հռետորաբանություն այլ թեմաներում, այդ թվում՝ Արցախում տեղի ունեցող Ադրբեյջանի քաղաքակա- նության վերաբերյալ: Հայտարարությունը կարելի է տեսնել այստեղ՝ <https://rce.eu.com/en/item/43538/> (մուտք՝ 3.11.2023): Դրան պատասխանեցին Կանադայում գործող Ցեղասպանագիտության ու Մարդու իրավունքների Միջազգային ինստիտուտի (Ջորջյան ինստիտուտի ստորաբաժանում) խորհրդում ընդգրկված 27 հեղինակավոր գիտնականները: <https://armenianweekly.com/2023/09/12/open-letter-to-the-rabbinical-center-of-europe/> (մուտք՝ 3.11.2023):

50 Տե՛ս **Bloxham D.**, *The Final Solution: A Genocide*, New York: Oxford UP, 2009: Հետաքրքիր է նաև այդ գրքի քննարկման շուրջ առաջացած գիտական բանավեճը: Տե՛ս Matthäus J., Shaw M., Bartov O., Bergen D., and Bloxham D., review forum of *The Final Solution*, “*Journal of Genocide Research*”, N 13 (1-2), 2011, էջ 107–52:

րույթը կիրառում է ավելի լայն իմաստով՝ որպես, առհասարակ, ցեղասպանության հոմանիշ:

6. Գաղութային ցեղասպանությունները

Հետազոտական նոր միտումներից կարելի է համարել նաև գաղութային քաղաքականության, կայսրությունների, իսկ ավելի լայն՝ Արևմուտքի հարաբերակցությունը ցեղասպանությունների հետ: Այսօր պարզ է, որ գաղութային կայսրությունների հիմքում ընկած ռասսայական քաղաքականությունը հաճախ գոյաբանական վտանգ է դարձել տեղաբնիկ շատ ժողովուրդների համար: Ավելին, առաջացած այդ սպառնալիքները չեն ավարտվում նույնիսկ գաղութներից տերությունների հեռանալու հետ, և երբեմն հետգաղութային բռնությունը նույնչափ վտանգավոր տեսք է ընդունում⁵¹:

Գաղութային քաղաքականության ցեղասպանական ներուժի նոր ընկալումը հեղափոխական զարգացում դարձավ ցեղասպանագիտության համար: Թեև Ռ. Լեմկինն իր գիտական գործունեության մեջ անդրադարձել է գաղութային տերությունների կողմից իրականացված ցեղասպանական գործողություններին, սակայն ցեղասպանագիտության զարգացման վաղ շրջանում գերիշխում էր մի մոտեցում, որը պատմաբան Դրոք Մոզեսն անվանում է «ցեղասպանության լիբերալ տեսություն»⁵²:

Եթե վերհիշենք ՄԱԿ-ի կողմից ընդունված «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան, ապա կտեսնենք, որ նման մոտեցման մասին է վկայում հենց փաստաթղթի բառապաշարը, որն, ի դեպ, կիսում էր նաև Ռ. Լեմկինը: Այն նշում է, որ պայմանավորվող կողմերը..., հայտարարել են, որ միջազգային իրավունքի համաձայն ցեղասպանությունը հանցագործություն է և հակասում է Միավորված ազգերի կազմակերպության ոգուն ու նպատակներին, և որ «քաղաքակիրթ աշխարհը» դատապարտում է այն...⁵³: Այսօր տարօրինակ է տեսնել իրավական փաստաթղթում «քաղաքակիրթ աշխարհ» եզրույթի օգտագործումը: Պատճառը տևական ժամանակ այն կարծիքի գերիշխումն էր, որ ցեղասպանությունն իրականացվում է միայն բարբարոս ու վայրենի ժողովուրդների կողմից, իսկ պայմանական «քաղաքակիրթ աշխարհը» դրան ընդունակ չէ:

51 Տե՛ս From the editor: new directions, “Journal of Genocide Research”, N 7 (2), 2005, էջ 169-170:

52 Տե՛ս **Moses D.**, Toward a Theory of Critical Genocide Studies, Online Encyclopedia of Mass Violence, 18 April 2008, <http://www.massviolence.org/Toward-a-Theory-of-Critical-Genocide-Studies> (մուտք՝ 3.11.2023):

53 Տե՛ս Ցեղասպանությունների կանխարգելման եւ պատժի մասին կոնվենցիա <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75835> (մուտք՝ 3.11.2023):

Սա եվրոպակենտրոն մոտեցումներով և գաղափարներով առաջնորդվող գիտության ազդեցության տակ ստեղծված այն պատկերացումն էր, որ ցեղասպանությունները սովորաբար իրագործվում են տոտալիտար երկրներում կամ երրորդ աշխարհի ձախողված պետություններում: Եվ դա կանխարգելելու լավագույն միջոցը հայտարարվում էր արևմտյան լիբերալիզմի, կապիտալիզմի, մարդու իրավունքների ու ժողովրդավարության տարածումն ամբողջ աշխարհում⁵⁴: Այս գաղափարները մեծապես առնչվում են նաև Ֆ. Ֆուկույամայի հայտնի «Պատմության ավարտի» տեսության⁵⁵ և Արդիականության տեսության հետ⁵⁶, որոնք լայն տարածում էին գտել 1990-ականներին: Սառը պատերազմի ընթացքում Արևմուտքի աջակցությունն Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի բռնապետական, հակակոմունիստական վարչակարգերին, կամ անգործությունը Ռուանդայում և Հարավսլավիայում, իհարկե, դիտվեցին որպես բարոյական սխալ: Սակայն այն միտքը, որ արևմտյան ժողովրդավարությունները կարող են ցեղասպանություն իրականացնել, գրեթե անհնար էր համարվում⁵⁷: Ավելին, արևմտյան պատմագրությունն ավանդաբար փառաբանել էր եվրոպացու մուտքը գաղութներ՝ այն ներկայացնելով որպես հումանիտար և քաղաքակրթական փոփոխությունների հնարավորություն, քանի որ «սպիտակ մարդն» իր հետ բերում էր ավելի զարգացած կրթական համակարգ,

54 Տե՛ս **Levene M.**, Genocide in the Age of the Nation State, vol.1, The Meaning of Genocide, London: I.B. Tauris, 2005, էջ 173:

55 Ֆրենսիս ֆուկույաման «Պատմության ավարտը եւ վերջին մարդը» գրքում պնդում էր, որ, Սառը պատերազմի ավարտով, Խորհրդային Միության փլուզման եւ Արեւմտյան լիբերալ ժողովրդավարության գալուստի հետ մեկտեղ պատմությունն ավարտվում է, քանի որ այլեւս չկա գաղափարական հակամարտություն, որը պատմության շարժիչ ուժն էր: Ըստ նրա՝ լիբերալ ժողովրդավարությունն այն վերջնական իդեալն է, որը պատմական զարգացման ընթացքում ցույց է տվել իր կատարյալ բնույթը՝ բարոյապես, քաղաքականապես եւ տնտեսապես: (Տե՛ս **Fukuyama F.** The End of History and the Last Man. Free Press, 2002: Այն կառուցվել է հետեւյալ հոդվածի հիմնական մտքի շուրջ **Fukuyama F.**, The End of History? “The National Interest”, N 16, 1989, էջ 3–18:

56 Արդիականության տեսությունը պատմությունը դիտարկում է իբրեւ զարգացում ավանդական հասարակությունից արդիական հասարակության, գյուղատնտեսականից՝ արդյունաբերական: Այս տեսությունը մինչեւ վերջերս, որպես էտալոնային ու առաջադեմ էր ճանաչում արևմտյան հասարակությունները, հետևաբար գտնում էր, որ առաջընթացը դա ավանդականի դուրս մղումն է արդիականով: Ավանդականը համարվում էր սոցիալական առաջընթացն արգելակող երևույթ, որը պետք է հաղթահարել կամ կտրել: Հետևաբար, բոլոր երկրների և ժողովուրդների զարգացումը պետք է ընթանար մեկ ուղղությամբ, ունենար նույն փուլերը և օրինաչափությունները: Արդիականության տեսությունը ընդունում էր, որ ազգային առանձնահատկություններ կարող են լինել, սակայն դրանք հայտարարվում էին երկրորդական:

57 Տե՛ս **Schaller D.**, From Lemkin to Clooney: The Development and State of Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 249:

բժշկություն, իրավական ինստիտուտներ և մուտք էր ապահովում դեպի համաշխարհային տնտեսություն⁵⁸:

Սակայն, 2000-ականներից սկսած, մի շարք գիտնականներ պնդում են այս թեզերի կեղծ լինելու մասին և նույնիսկ հասնում նրան, որ ցեղասպանությունների ծագումնաբանությունը սկսում է կապվել Արևմուտքի վերելքի հետ⁵⁹:

Աշխարհի տարբեր մասերը գաղութացնելով՝ եվրոպացիները սկզբում փոխում էին տնտեսական ողջ համակարգը՝ կոտրելով կենցաղավարության հին ավանդական ձևերը և տանելով այն դեպի արդիականություն: Սրան հետևում էր եվրոպական բարոյական և քաղաքակրթական արժեքների պարտադրանքը, որը, սովորաբար, իրականացվում էր քրիստոնյա քարոզիչների՝ միսիոներների միջոցով: Այս ամենն ուղեկցվում էր անասելի դաժանությամբ⁶⁰, որն իրականում ոչ մի կերպ չէր տեղավորվում հենց եվրոպացիների քարոզած բարոյական արժեքների մեջ:

Հետաքրքիր և կարևոր փոփոխություն տեղի ունեցավ 1992 թ., երբ աշխարհը նշում էր Կոլումբոսի Ամերիկյա հասնելու 400 ամյակը: Լույս տեսան մի շարք կարևոր աշխատանքներ՝ Դավիդ Սթաննարդի, Հովարդ Չերչիլի, Ռիչարդ Դրինոնի և Ռասսել Թորնթոնի հեղինակությամբ, որոնք դուրս էին «Ամերիկայի հայտնագործման» ընդունված պատկերացումներից⁶¹ և բոլորովին էլ չէին փառաբանում եվրոպացու մուտքը արևմտյան կիսագունդ:

Իսկ 1990-ականների կեսերից նոր սերնդի ցեղասպանագետները, հիմնականում Հյուսիսային Ամերիկայից, սկսեցին հարցեր բարձրացնել իրենց պետությունների կողմից գաղութներում իրականացված ցեղասպանությունների մասին⁶²: Կարելի է նշել նաև Սվեն Լինքվիստի «Բնաջնջել

58 Տե՛ս **օրիսակ Ferguson N.**, *Empire: The Rise and Demise of the British World Order and the Lessons for Global Power*, New York: Basic Books, 2003:

59 Տե՛ս **Levene M.**, *Genocide in the Age of the Nation State*, vol. 2, *The Rise of the West and the Coming of Genocide*, London: I.B. Tauris, 2005, **Mann M.**, *The Dark Side of Democracy: Explaining Ethnic Cleansing*, Cambridge: Cambridge University Press, 2005; *Empire, Colony, Genocide: Conquest, Occupation, and Subaltern Resistance in World History* (ed. by **Moses D.**), New York: Berghahn, 2008, **Veracini L.**, *Settler Colonialism: A Theoretical Overview*, Basingstoke: Palgrave Macmillan, 2010:

60 Տե՛ս **Schaller D.**, *From Lemkin to Clooney: The Development and State of Genocide Studies*, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 249–250:

61 Տե՛ս **Stannard D.**, *American Holocaust: The Conquest of the New World*, New York: Oxford University Press, 1992, **Churchill W.**, *A Little Matter of Genocide: Holocaust and Denial in the Americas, 1492 to the Present*, San Francisco: City Lights, 1997, **Drinnon R.**, *Facing West: The Metaphysics of Indian Hating and Empire Building*, New York: Schocken, 1990, **Thornton R.**, *American Indian Holocaust and Survival: A Population History since 1492*, Norman: University of Oklahoma Press, 1990:

62 Տե՛ս **Thornton R.**, *American Indian Holocaust and Survival*, Norman: University of Oklahoma Press, 1987, **Barta T.**, *Relations of Genocide: Land and Lives in the Colonization of Australia*,

ներից մեկը⁶⁶: Ընդհանուր առմամբ, այդ դպրոցներ հաճախած երեխաների թիվը հասնում էր 150.000-ի: Կանադայի հնդկացիական դպրոցների հարցով հանձնաժողովն իր հերթին եզրակացրել է, որ Կանադայի հնդկացիական դպրոցական համակարգը «կարելի է բնութագրել որպես մշակութային ցեղասպանություն»⁶⁷:

Թեման դարձավ ակտիվ ուսումնասիրության առարկա: Մասնավորապես, լույս տեսան Մանիթոբայի համալսարանի պրոֆեսորներ Էնդրյու Ուլֆորդի և Ադամ Միլլերի հետազոտությունները⁶⁸: Հետաքրքիր է, որ նմանատիպ քաղաքականություն վարվել է նաև Ավստրալիայում, որտեղ այս երևույթը կոչվում էր «Կորուսյալ սերունդներ» (նաև հայտնի են որպես «Գողացված երեխաներ»), երբ Ավստրալիայի և Թորեայան կղզիների բնիկների երեխաներն Ավստրալիայի դաշնային, պետական մարմինների և եկեղեցական առաքելությունների կողմից հեռացվում էին իրենց ընտանիքներից, փոխանցվում եկեղեցիների դաստիարակության ներքո՝ նույնպես կորցնելով իրենց մշակութային ցանկացած հատկանիշ: Այս քաղաքականությունն իրականացվել է 1905-1969 թթ., որոշ տեղերում շարունակվել է մինչև 1970-ականներ: Թեմայի շուրջ իրականացրած հետազոտություններով առանձնանում է ավստրալացի Քոլին Թաթսը⁶⁹:

Գաղութային իշխանության ու ցեղասպանության միջև կապի մասին, վերոնշյալ հետազոտությունների հետ մեկտեղ, շրջանառության մեջ մտան նաև նմանատիպ այլ դեպքերի ուսումնասիրությունները: Ավելին, Հոլոքոստի մասնագետները սկսեցին գրել այն մասին, թե ինչպես է ամերիկացի տեղաբնիկների ոչնչացումը ոգեշնչել նացիստներին: Օրինակ, Վենդի Լոուերը, իր «Նացիստների կայսրության կառուցումը և Հոլոքոստն Ուկրաինայում» գրքում ցույց է տալիս, որ Հիտլերի, Հիմլերի և Ռոզենբերգի պատկերացումներում նացիստների Արիական դրախտը, դեպի արևելք ընդարձակումը կապվում էր հենց Հյուսիսային Ամերիկայի գաղութացման,

66 Տե՛ս Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիա

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75835> (մուտք՝ 3.11.2023):

67 Տե՛ս **Amir R.**, Cultural Genocide in Canada? It Did Happen Here, “Aboriginal Policy Studies”, N 7 (1), 2018, էջ 103-126:

68 Տե՛ս **Woolford A.**, This Benevolent Experiment: Indigenous Boarding Schools, Genocide, and Redress in Canada and the United States, University of Nebraska Press, 2015, **Muller A.**, Troubling history, troubling law: The question of indigenous genocide in Canada, “Understanding atrocities: Remembering, representing, and teaching genocide” 2017, էջ 83-106:

69 Տե՛ս **Tatz C.**, Australia’s Unthinkable Genocide, Xlibris Au, 2017, **Tatz C.**, With Intent to Destroy: Reflections on Genocide, Verso, 2003, **Tatz C.**, Genocide Studies: An Australian Perspective, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011:

Բրիտանական կայսրության՝ Հնդկաստանում հաստատվելու և եվրոպացիների կողմից Աֆրիկայի շահագործման հետ⁷⁰:

Որպես հետևանք, մի շարք ցեղասպանագետներ (առաջին հերթին՝ Դոնալդ Բլոքսհենը, Ալեքսանդր Հինթոնը և Դերք Մոզեսը) սկսեցին կիրառել կայսերականություն (իմպերիալիզմ) և գաղութատիրություն (կոլոնիալիզմ)՝ հասկացությունները՝ ժամանակակից ցեղասպանությունները բացատրելու համար: Մոզեսը, հղելով նաև Լեմկինին, պնդում էր, որ հին ժամանակներից հենց այդ երկու իրողություններն են բերել բազմաթիվ ցեղասպանությունների⁷¹:

Այս շարքում կարելի է հիշել բազմաթիվ դեպքեր՝ Քանաանի նվաճումը իսրայելցիների կողմից, Իսրայելի ոչնչացումը՝ Ասորեստանի կողմից, Մելուսի ոչնչացումը՝ Աթենքի կողմից, Հուդեայի և Կարթագենի հռոմեական ոչնչացումը, իսպանացիների, հետագայում նաև այլ եվրոպացիների կողմից Ամերիկաների գաղութացումը և տեղաբնիկների բնաջնջումը, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի բրիտանական բնակեցումը և տեղացիների սպանությունը, Բելգիական թագավոր Լեոպոլդ II-ի՝ Կոնգոյում իրականացրած վայրագությունները, հերերո և նամա ժողովուրդների՝ Գերմանական կայսրության կազմակերպած կոտորածները⁷²:

Այս բոլոր դեպքերն ունեն ընդհանուր մի հատկանիշ. նրանք կայսերական վարչակարգերի կողմից նվաճումների և գաղութային քաղաքականության հետևանքով տեղի ունեցած զանգվածային սպանություններն

70 Տե՛ս **Lower W.**, Nazi Empire Building and the Holocaust (Chapel Hill, NC: University of North Carolina Press, 2005), p. 19 ըստ Curthoys A., Docker J., Defining Genocide, “The Historiography of Genocide” (ed. by Stone D.), Palgrave Macmillan, 2008, p.33, **Usbeck F.**, Fellow Tribesmen. The Image of Native Americans, National Identity, and Nazi Ideology in Germany, Berghahn Books, 2015, **Westermann E.**, Hitler’s Ostkrieg and the Indian Wars: Comparing Genocide and Conquest, University of Oklahoma Press, 2016:

71 Տե՛ս Empire, Colony, and Genocide: Conquest, Occupation, and Subaltern Resistance in World History (ed. by **Moses D.**), New York: Berhahn, 2008, **Melson R.**, review of Empire, Colony, and Genocide, “Journal of World History”, 20 (3), 2009, էջ 463–66, Colonialism and Genocide (ed. by **Moses D., Stone D.**), New York: Routledge, 2007, Bloxham D., The Great Game of Genocide, Imperialism, Nationalism, and the Destruction of Ottoman Armenians, Oxford: Oxford University Press, 2007:

72 Տե՛ս Genocide, War Crimes and the West: History and Complicity (ed. by **Jones A.**), London: Zed Books, 2004, eds., Genocide of Indigenous Peoples: A Critical Bibliographic Review, vol. 8 (ed. by **Totten S., Hitchcock R.**), New Brunswick, NJ: Transaction, 2011, **Kiernan B.**, Blood and Soil: A World History of Genocide and Extermination from Sparta to Darfur, Yale University Press, 2009, **Naimark N.**, Genocide: A World History, Oxford University Press, 2016, Century of Genocide: Critical Essays and Eyewitness Accounts (ed. by **Totten S., Parsons W.**), Routledge, 2008, The Specter of Genocide: Mass Murder in Historical Perspective (ed. by **Gellately R., Kiernan B.**), Cambridge University Press, 2010, The Cambridge World History of Genocide: Volume 1, Genocide in the Ancient, Medieval and Premodern Worlds (ed. by **Kiernan B., Lemos T., Taylor T.**), Cambridge University Press, 2023:

են ու ցեղասպանությունները⁷³: Ընդ որում, շատ դեպքերում այս ուսումնասիրությունները կրում են բավականին արժեքավոր բնույթ նաև ցեղասպանագիտության տեսական դրույթների զարգացման համար: Օրինակ, Ամերիկայի տեղաբնիկների ոչնչացումը շատ ժամանակ մեծապես գուգորդվել է համավարակներով: Եվրոպացիները, գալով Նոր աշխարհ, իրենց հետևանքային բերում էին այդ համավարակների հարուցիչները, և, քանի որ տեղաբնիկները չունեին դրանց նկատմամբ իմունիտետ, ամբողջական համայնքներ ուղղակի ոչնչանում էին⁷⁴: Սա հարց է առաջացնում. արդյո՞ք այդ հիվանդության չնտադրված տարածումը կամ եվրոպացի վերաբնակիչների որոշ գործողությունների հետևանքով առաջացած սովը, որը բերել է զգալի ժողովրդագրական փոփոխությունների, կարող է համարվել ցեղասպանություն: Օրինակ, Հոլարդ Չերչիլը համարում է, որ այն կարող է բնորոշվել իբրև ցեղասպանություն⁷⁵: Նա նշում է, որ հիվանդության հետագիծը զուտ պաթոգենների պատահական փոխանակման գործառույթ չէր, այլ այն տարածվել է կենսաբանական պատերազմի և այլ միջոցներով, օրինակ՝ պարտադրված սովամահության, սննդի աղբյուրների ոչնչացման, ֆիզիկական ոչնչացման, մշտական ճնշման և ընտանիքների ոչնչացման հետ միաժամանակ՝ բնիկ բնակչության թուլացման համատեքստում⁷⁶:

Որոշ դեպքերում էլ ցեղասպանությունները տեղի են ունենում, երբ գաղութային իշխանությունները հեռանում են նվաճված տարածքներից, և իշխանության են գալիս որոշ ազգայնական ուժեր: Դա բերում է բախման, քանի որ, սովորաբար, գաղութարարները տարածքն առավել արդյունավետ կառավարելու համար առավելությունը տալիս են մեկ խմբին, և ստեղծվում է տարբեր խմբերի միջև թշնամանքի ու հակասությունների մի մթնոլորտ, ինչը բերում է արյունալի բախումների և նույնիսկ՝ զանգվածային սպանությունների ու ցեղասպանությունների: Ամենացայտուն օրինակը, թերևս, Ռուանդայում տեղի ունեցած ցեղասպանությունն էր: Գաղութային

73 Տե՛ս **Melson R.**, Critique of Current Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 6(3), 2011, էջ 282: Սակայն, իհարկե, պետք է այս ամենին մոտենալ վերապահումով: Նախ, ոչ բոլոր գաղութացումներն են ավարտվել ցեղասպանություններով, ոչ բոլոր ցեղասպանությունների հիմքում են գաղութային հիմնավորումները, եւ չի կարելի անտեսել այլ պատճառներ, որոնք կարող են բերել ցեղասպանության: Բացի այդ, իհարկե, որոշ շրջաններում գաղութային իշխանությունների քաղաքականությունն իրոք բերել է որոշակի դրական արդյունքների:

74 Հետագայում եվրոպացիները սկսեցին կիրառել այն որպես զենք, օրինակ՝ նվիրելով հազուստ կամ կտորեղեն, որոնք եղել են որոշ հիվանդությունների կրողների հետ շփման մեջ:

75 Տե՛ս **Churchill W.**, A Little Matter of Genocide: Holocaust and Denial in the Americas 1492 to the Present, San Francisco: City Lights, 1997, էջ 137–46:

76 Տե՛ս **Theriault H.**, Against the Grain: Critical Reflections on the State and Future of Genocide Scholarship, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 133-134:

քաղաքականությունն այս երկրում հիմնված էր երկու խմբերի՝ թուֆսիների և հուլունների միջև տարբերությունների ընդձեռն և թշնամանք սերմանելու վրա: Բելգիայի կառավարությունը բացահայտ առավելություն էր տալիս փոքրամասնություն կազմող թուֆսիներին, որոնց նշանակում էր գաղութային վարչակարգի առանցքային պաշտոններում: Միայն թուֆսիներին էր թույլատրված կրթություն ստանալ, զբաղվել հարկահավաքությամբ և ազատորեն տեղաշարժվել երկրով: Մեծամասնություն կազմող հուլունները հիմնականում աղքատ էին և իշխանությունից օտարված. մի կարգավիճակ, որը նրանց շրջանում բնական ընդվզում էր առաջացնում:

1950-ականների կեսերից սկսած, Ասիայում և Աֆրիկայում սկսվեց ապագաղութացման գործընթացը: Բելգիայի կառավարությունը ձգտում էր խուսափել տեղացիների կողմից անկախության համար ամբողջ մայրցանաքում մղվող պատերազմներից և դադարեց սատարել թուֆսիներին: Քաղաքականությունը կտրուկ կերպով փոխվեց, և այժմ ճնշված խմբի դերում հայտվեցին թուֆսիները: Սրա արդյունքը եղավ երկար տարիների կուտակված ատելության և վրեժի զգացման բռնի դրսևորումը: 1959 թվականին Ռուանդայով անցավ թուֆսինների կոտորածների առաջին ալիքը, իսկ դրա գագաթնակետը եղավ 1994 թ. ցեղասպանությունը, որին զոհ գնացին մոտ 800 հազար թուֆսիներ⁷⁷:

Շատ այլ երկրներում նույնպես գաղութային տիրապետությունը ստեղծում էր պայթյունավտանգ իրավիճակ, որը հանգուցալուծվում էր գաղութների փլուզումից հետո, երբ հասարակությունում առկա լարվածությանն ավելանում էր նորահայտ պետություններում ընթացող ազգաստեղծման գործընթացը և զարկ էր տրվում ծայրահեղ ազգայնամոլությանը⁷⁸:

Երբ 1960 թվականին եվրոպական գաղութային կայսրությունները համաձայնեցին իրենց տիրապետության տակ գտնվող աֆրիկյան պետությունների անկախացման շքերթի հետ⁷⁹՝ վերջիններս բախվեցին ար-

77 Ռուանդայի ցեղասպանության մասին տե՛ս **Mamdani M.**, *When Victims Become Killers: Colonialism, Nativism, and the Genocide in Rwanda*, Princeton University Press, 2001, **Straus S.**, *The Order of Genocide: Race, Power, and War in Rwanda*, Ithaca, NY, Cornell University Press, 2006, **Hatzfeld J.**, *Machete Season: The Killers in Rwanda Speak*, New York: Farrar, Straus and Giroux, 2005/Picador, 2006, **Fujii L.**, *Killing Neighbors: Webs of Violence in Rwanda*, Cornell University Press, 2009:

78 Տե՛ս **Butalia U.**, *The Other Side of Silence: Voices from the Partition of India*. Durham, NC: Duke University Press, 1998, **Hansen A.**, *Partition and Genocide: Manifestation of Violence in Punjab 1937–1947*”, *India Research Press*, 2004, **Pandey G.**, *Remembering Partition: Violence, Nationalism and History in India*. Cambridge University Press, 2002, **Jahan R.**, *Genocide in Bangladesh*, “*Century of Genocide: Critical Essays and Eyewitness Accounts*” (ed. by **Totten S.**, **Parsons W.**), Routledge, 2004, էջ 295–321:

79 1960 թ. Աֆրիկայի 17 գաղութ անկախություն են հռչակել եւ վեր են ածվել պետությունների:

հետազոտողներն գծված սահմանների առաջ բերած քառուսին: Գաղութա-
րարները դրանք գծում էին իրենց իսկ նպատակահարմարությունից ելնե-
լով՝ հաշվի չառնելով մայրցամաքի էթնիկ պատկերը: Շատ էթնիկ խմբեր
հայտնվեցին տարբեր պետություններում՝ բաժանված արդեն պետական
սահմաններով: Նրանք ներառվել էին պետությունների մեջ այլ ժողո-
վուրդների հետ, որոնց հետ չունեին կապ, իսկ երբեմն նաև թշնամական
հարաբերությունների մեջ էին: Դա անխուսափելիորեն բերում էր հակա-
մարտությունների ու արյունալի պատերազմների: Օրինակ, Նիգերիայում
երկար տարիներ քաղաքացիական պատերազմ էր երեք մեծ ու գերիշխող
խմբերի միջև՝ Հաուսա-ֆուլանին՝ Հյուսիսում, Յորոբաները՝ հարավ-արև-
մուտքում և Իգբոները՝ հարավ-արևելքում⁸⁰, ինչը զանգվածային սպա-
նությունների էր բերում:

Այս քաղաքականության ժամանակակից դրսևորումներից է նաև
նոր գաղութացումը, երբ վերագգային կորպորացիաները, հետապնդելով
իրենց շահերը, շահագործում են հիմնականում Աֆրիկայի և Հարավային
Ամերիկայի ռեսուրսները՝ դրանով իսկ նպաստելով բնապահպանական
խնդիրների ահագնացմանը և տեղաբնիկ ժողովուրդների գոյատևման
համար անհրաժեշտ միջավայրի վերացմանը, ինչը կարող է բերել այդ
խմբերի անհետացմանը⁸¹:

Ռաֆայել Լեմկինն իր «Առանցքի երկրների տիրապետությունը
օկուպացված Եվրոպայում» գրքում շատ հետաքրքիր կերպով վերլուծում է
ցեղասպանական քաղաքականությունը: Նա նշում է, որ ցեղասպանու-
թյունն ունի երկու փուլ՝ ճնշված խմբի ազգային բնույթի ոչնչացումը և ճն-
շողի ազգային բնույթի պարտադրումը: Այս պարտադրանքը, իր հերթին,
կարող է դրվել ճնշված բնակչության մի մասի վրա, որին կարող է թույ-
լատրվել գոյություն ունենալ տարածքի վրա՝ բնակչության հեռացումից և

80 Տե՛ս **Abubakar D.**, Ethnic identity, democratization and the Future of the African State: Lessons from Nigeria, “African Issues”, N 29 (1–2), 2001, էջ 31–6, **Odugu E.**, The Issue of Ethnicity and Democratization in Africa: Towards the Millennium, “Journal of Black Studies”, N 29 (6), 1999, էջ 790–808 **Das V.**, Collective Violence and the Shifting Categories of Communal Riots, Ethnic Cleansing and Genocide, “The Historiography of Genocide” (ed. by **Stone D.**), Basingstoke: Plagrave Macmillan, 2008, էջ 98:

81 Տե՛ս Empire, Colony, Genocide: Conquest, Occupation and Subaltern Resistance in World History (ed. by **Moses D.**), London: Berghahn Books, 2008, **Robins N., Jones A.**, Genocides by the Oppressed: Subaltern Genocide in Theory and Practice, Bloomington, IN: Indiana UP, 2009, **Levene M.**, From Past to Future: Prospects for Genocide and its Avoidance in the Twenty-First Century, “Oxford Handbook of Genocide Studies” (ed. by **Bloxham D., Moses D.**), Oxford: Oxford University Press, 2010 էջ 638–60, **Benjaminsen T.**, Does Supply-Induced Scarcity Drive Violent Conflicts in the African Sahel? “Journal of Peace Research”, N 45 (6), 2008, էջ. 819–36, **Salehyan I.**, From Climate Change to Conflict? No Consensus Yet, “Journal of Peace Research”, 45(3), 2008, էջ 315–26 **Das Verdeja E.**, On Situating the Study of Genocide within Political Violence, “Genocide Studies and Prevention” 7 (1), 2012, էջ 81:

ձնշողի կողմից սեփական քաղաքացիներով տարածքը գաղութացնելուց հետո⁸²: Այս բացատրությունը պարզորոշ ցույց է տալիս ցեղասպանության և կայսերական գաղութատիրության միջև գոյություն ունեցող կապը⁸³:

7. Ուսումնասիրել կանխարգելելու համար

Կանխարգելման հրամայականն ուղեկցել է ցեղասպանություն եզրույթի առաջացման հենց առաջին օրերից: Ռաֆայել Լեմկինի համար այդ եզրույթի ստեղծման նպատակը հենց մեղավորներին պատժելն ու ապագայում նման ոճիրները կանխելն էր: Պատահական չէ, որ ՄԱԿ-ի կողմից ընդունված Կոնվենցիան իր անվանման մեջ ունի այս երկու բաղադրիչները: Շատ ցեղասպանագետներ հենց այս սարսափելի ոճրի կանխարգելման հրամայականն են համարում ցեղասպանագիտության գոյության հիմնական իմաստը:

Գիտաճյուղի հայրերից կլինիկական հոգեբան Իսրայել Չառնին ցեղասպանությունն ուսումնասիրող գիտնականներին համեմատում է բժիշկների հետ, ովքեր ներգրավված են զննման, բուժման և կանխարգելման գործում: Նա, բժշկության հետ զուգահեռներ տանելով, նշում է, որ կլինիկական հետազոտությունները, իսկ տվյալ դեպքում՝ պատմությունների հավաքագրումն ու վերլուծությունը, հետո նաև՝ սահմանումների ու երևույթների բնորոշման ու վարկածների մշակման փուլն ավարտվել է, և ժամանակն է անցնել բուժման, որը ներառում է ցեղասպանության «վաղ նախազգուշացումներին» արձագանքելու մեխանիզմների մշակումը և ցեղասպանության հավանականությունը կանխելու փորձը⁸⁴:

Գիտնականների մեծ մասը համաձայնում է, որ կանխարգելելու համար անհրաժեշտ պայման է՝ բացահայտել վաղ նախանշանները: Իհարկե, անհնար է գտնել ցեղասպանությունը հարյուր տոկոսով կանխարգելող մեխանիզմ: Սակայն կարելի է զարգացնել և կատարելագործել վաղ հայտնաբերման միջոցները և մեծ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր իրավիճակին, որն ունի զարգացման վտանգավոր ներուժ: Արձանագրելով զանգվածային խտրականության, որոշակի խմբերի համար սննդի մատակարարման մտադրված խափանումները կամ թիրախավոր-

82 **Տե՛ս Lemkin R.**, Axis Rule in Occupied Europe, էջ xi, 79–80:

83 **Տե՛ս Curthoys A., Docker J.**, Defining Genocide, The Historiography of Genocide (ed. by Stone D.), Palgrave Macmillan, 2008, էջ 11:

84 **Տե՛ս Charny I.**, Requiem for the Prevention of Genocide in Our Time: Working toward an Improbable Possibility but Not Giving Up, “Genocide Studies and Prevention”, N 7(1), 2012, էջ 109–110, **Mayersen D.**, Predicting Genocide and Mass Killing, “Journal of Genocide Research”, N 23 (1), 2021, էջ 82:

ված խմբի ներկայացուցիչների նկատմամբ սեռական բռնությունների դեպքերը՝ կարելի է կազմել հստակ պատկեր ոչ միայն մարդու իրավունքների զանգվածային խախտումների, այլև ցեղասպանական գործողության հնարավորության մասին: Եվ այս ընթացքը բավականին տեսանելի է: Օրինակ, հրեաներին մահվան ճամբարներ ուղարկելը գուցե այդքան էլ հեշտ չլիներ, եթե նրանք նախօրոք տեղահանված չլինեին իրենց տներից և կենտրոնացված չլինեին գետտոներում, որտեղ հարյուր հազարավոր հրեաներ մահացան հիվանդություններից և սովից⁸⁵:

Արցախի հայության բռնի տեղահանությունը կարող էր այդքան արագ տեղի չունենալ, եթե դրան չնախորդեր երկար ամիսներ տևած շրջափակումը, սննդի և կենսական այլ ապրանքների մուտքի արգելքը⁸⁶:

Այս ամենը ցույց է տալիս, թե որքան կարևոր է մշտադիտարկումը, իսկ դրանից առաջ՝ ցեղասպանության պատճառների և նախնական փուլի ուսումնասիրությունը: Հենց այդ պատճառով էլ 1980-ականներին գիտնականները զբաղված էին ցեղասպանությունները ծնող գործոնների ուսումնասրությամբ, քանի որ կարծում էին, որ անցյալում տեղի ունեցած ցեղասպանությունների քննումը, դրանց տիպավորումը և վաղ ազդանշանների բացահայտումը կարող է օգնել՝ ապագայում իրավիճակը փոխելու համար⁸⁷:

Գիտաճյուղի զարգացմանը զուգընթաց առաջարկվել են տարբեր մոդելներ, որոնք պետք է թույլ տան՝ մշտադիտարկման միջոցով բացահայտել սպառնալիքը, տեղորոշել ցեղասպանական հնարավոր վտանգները և դրանով նպաստել կանխարգելմանը: Ամենահայտնին, իհարկե, ամերիկացի քաղաքագետներ Բարբարա Հարֆի և Թեդ Գուրրի առաջարկած մոդելն է, որը ցեղասպանությունը կանխատեսելու համար օգտագործում է վեց հիմնական փոփոխականներ՝ քաղաքական հակամարտության աստիճան, նախկինում իրականացված ցեղասպանության առկայություն, իշխող վերնախավի գաղափարախոսություն, վարչակարգի տեսակ, էթնիկ իրավիճակ և արտաքին աշխարհի համար բաց լինելու աստիճան: Այն նաև առա-

85 Տե՛ս **Rosenberg Sh.**, Genocide Is a Process, Not an Event, “Genocide Studies and Prevention”, N 7(1), 2012, էջ 20–21:

86 Շրջափակման մասին տես մի շարք հեղինակավոր գիտնականների և միջազգային կառույցների զեկույցները, Միջազգային քրեական դատարանի նախկին դատավոր Լուիս Մորենո Օկամպո՝ տե՛ս <https://www.cftjjustice.org/wp-content/uploads/2023/08/Moreno-Ocampo-Expert-Opinion.pdf>, ՄԱԿ-ի՝ տե՛ս <https://www.ohchr.org/en/press-releases/2023/08/un-experts-urge-azerbaijan-lift-lachin-corridor-blockade-and-end>, Միջազգային համաձայնություն՝ տե՛ս <https://www.amnesty.org/en/latest/news/2023/02/azerbaijan-blockade-of-lachin-corridor-putting-thousands-of-lives-in-peril-must-be-immediately-lifted/>:

87 Տե՛ս **Fein H.**, Genocide: A Sociological Perspective, “Current Sociology”, N 38 (1), 1990, էջ 1–126:

ջարկում է որոշ գործոններ, որոնք կարող են «արագացնել» ցեղասպանությունը⁸⁸:

Մյուս համակարգերը ներառում են «Փոքրամասնությունների իրավունքների միջազգային խմբի» (“Minority Rights Group International”) «Վտանգի տակ գտնվող ժողովուրդներ» (“Peoples Under Threat”), և «Ցեղասպանությունների դիտարկման» (“Genocide Watch”) «Ցեղասպանությունների, Պոլիտիցիդների և Զանգվածային բռնությունների» (“Countries at Risk of Genocide, Politicide, or Mass Atrocities”) գնահատումները⁸⁹: Արձագանքման երկու նախագծեր են առաջարկվել նաև ԱՄՆ կառավարության կողմից, որոնք, սակայն, գործնականում ոչ մի արդյունք չեն տվել: Խոսքը 2008 թ. Ջորջ Բուշի վարչակարգի կողմից ընդունված «Կանխարգելելով ցեղասպանությունը» (“Preventing Genocide”) և «Զանգվածային ոճրագործություններին՝ պատասխան գործողություններ» (“MARO: Mass Atrocity Response Operations”) ծրագրերի մասին է, որոնք նախաձեռնվեցին 2010 թ.՝ Օբամայի վարչակարգի հովանավորությամբ⁹⁰:

Այս զեկույցների հիմնական գաղափարը ցեղասպանական գործողությունների կանխարգելման համար ազգային ինքնիշխանության սահմանափակման հրամայականն է: Բայց սա զավեշտալի պնդում է՝ այն պարագայում, երբ ԱՄՆ-ն ինքը չի ստորագրել մի շարք փաստաթղթեր՝ հղում կատարելով սեփական ինքնիշխանության սահմանափակման անթույլատրելիությանը, այդ թվում՝ չմիանալով Միջազգային քրեական դատարանի հիմնող Հռոմի ստատուտին, որն ուղղակիորեն ստեղծված էր ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական

88 Տե՛ս **Harff B., Gurr T.**, Toward Empirical Theory of Genocides and Politicides; **Harff B. Gurr T.**, Systematic Early Warning of Humanitarian Emergencies, “Journal of Peace Research”, N 35 (5), 1998, էջ 551–79, **Harff B.**, No Lessons Learned from the Holocaust?, “American Political Science Review”, 97(1), 2003, էջ 57–73, **Harff B.**, Countries at Risk of Genocide and Politicide after 2016 – and Why, ըստ Preventing Mass Atrocities: Policies and Practices (ed. by **Harff B., Gurr T.**), New York: Routledge, 2019, էջ 27–39:

89 Տե՛ս Peoples under Threat 2019, Minority Rights Group International, imicode <https://minorityrights.org/publications/peoples-under-threat-2019/>; Genocide Watch, <https://www.genocidewatch.com/>:

90 Տե՛ս **Albright M., Cohen W.**, United States Holocaust Memorial Museum, The American Academy of Diplomacy and the Endowment of the US Institute of Peace, Preventing Genocide: A Blueprint for U.S. Policymakers, Washington, DC: Genocide Prevention Task Force, 2008, **Sewall S., Raymond D., Chin S.**, MARO: Mass Atrocity Responses Operations; A Military Planning Handbook, Cambridge, MA: Harvard Kennedy School / Carr Centre for Human Rights Policy, 2010, “Genocide Studies and Prevention” հասնելը երկու հատուկ համար է նվիրել այս թեմային տե՛ս “Genocide Studies and Prevention”, 2011, N 4 (2), 2009 եւ N 6 (1):

հանցագործությունների մեղադրանքով անհատներին պատասխանատվության կանչելու համար⁹¹:

Բավականին մեծ հույսեր էին կապվում «Պաշտպանելու պարտավորվածություն» (“Responsibility to Protect (R2P)”) հայեցակարգի և քաղաքական նախաձեռնության հետ: Այն քաղաքական գործիչների և գիտնականների համագործակցության շատ լավ օրինակ էր: R2P-ն ծագել է որպես Կանադայի կառավարության նախագիծ և սերտորեն կապված էր «Ցեղասպանագիտության և մարդու իրավունքների Մոնրեալի ինստիտուտի» հետ, ինչպես նաև պատմաբան Ֆրենք Չոքի ու իր գործընկերների կողմից մշակված նույնանման «Միջամտելու կամքը» (W2I) նախագծի հետ⁹²:

Այն հռչակեց, որ պետության ինքնիշխանությունը՝ սուվերենությունը չի կարող լինել արգելք խմբերի նկատմամբ բռնությունը կանգնեցնելու միջամտության համար: Այսինքն, այն արտոնում էր ցանկացած պետության՝ միջամտել այլ պետության գործերին՝ այն դեպքում, եթե ի հայտ կգա ցեղասպանության վտանգ: Այս շատ տրամաբանական և առաջադիմական գաղափարը, սակայն, նույնպես մնաց թղթի վրա:

Այս բոլոր մոդելներն օգտագործում են տարբեր ռիսկի նախանշաններ և կազմում ռիսկային երկրների ցանկեր: Սա կարող է օգտակար տեղեկություն տրամադրել քաղաքականություն մշակողների և գործնականորեն այս դաշտում ներգրավված պաշտոնյաների համար: Կարելի է ասել, որ դրա հաջող իրականացման համար կան բոլոր նախապայմանները՝ տեղեկատվության առատություն, ոլորտին ծանոթ և նվիրյալ մասնագետներ:

Եվ, իհարկե, պետք է հիշել, որ, անկախ նոր մոդելների առաջարկումից, պետությունները ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայի ստորագրման փաստով միայն ունեն ցեղասպանությունը կանխարգելելու իրավական պարտավորություն, ինչը, օրինակ, ևս մեկ անգամ ընդգծվեց Արդարադատության միջազգային դատարանի կողմից քննված Բոսնիա—Հերցոգովինան՝ Սերբիայի և Մոնթենեգրոյի դեմ գործում, երբ վերջիններս 2007 թ. փետրվարին մեղավոր ճանաչվեցին հենց կանխարգելումը չապա-

91 Տե՛ս **Feierstein D.**, Leaving the Parental Home: An Overview of the Current State of Genocide Studies, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 263: 2023 թվականի հոկտեմբերի 3-ին Հայաստանի Ազգային ժողովը վավերացրեց Հռոմի ստատուտը 60 կողմ և 22 դեմ ձայներով և Հայաստանի Հանրապետությունը միացավ Միջազգային Քրեական դատարանին: «ԱԺ-ն վավերացրեց Հռոմի ստատուտը՝ 60 կողմ, 22 դեմ ձայներով», <https://www.civilnet.am/news/753034> (մուտք՝ 3.11.2023):

92 Տե՛ս **Jones A.**, Diffusing Genocide Studies, Defusing Genocides, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ 275:

հովելու համար⁹³: Այսպիսով, 136 պետություն ստանձնել է ցեղասպանությունները կանխելու այս պարտավորությունը, և ցեղասպանության՝ օրենքից դուրս լինելը կարելի է համարել *jus cogens* սկզբունքը, որն այնքան հիմնարար է, որ ոչ մի պետություն չի կարող այն անտեսել⁹⁴:

Թեև ցեղասպանության կանխարգելումը ՄԱԿ-ի առաջնահերթություններից է, իսկ ՄԱԿ անդամ պետությունները, տարածաշրջանային կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ունեն հստակ պարտավորություն, ինչպես նաև ռեսուրսներ այդ պարտավորությունն ի կատար ածելու համար, սակայն կարելի է միանշանակ պնդել, որ դեպքերի մեծ մասում կանխարգելումը ձախողվում է⁹⁵: Թեև վաղ ազդարարման նշանները կարող են բավականին մեծ ճշգրտությամբ կանխատեսել ապագա արհավիրքը, սակայն, մեծ հաշվով, մշտապես բախվում են քաղաքական նպատակահարմարության պատճենին, երբ քաղաքական կամ տնտեսական շահերն առաջնահերթություն են ստանում մարդասիրության և զանգվածային ոճիրների կանխարգելման նկատմամբ:

Մեզ համար թեման արդիականություն ձեռք բերեց հենց Արցախում տեղի ունեցած ցեղասպանական գործողությունների համատեքստում: Միջազգային Քրեական դատարանի նախկին դատավոր Լուիս Մորենո Օկամպոյի, ՄԱԿ Գլխավոր քարտուղարի՝ Ցեղասպանության կանխարգելման հարցերով նախկին հատուկ խորհրդական Խուան Մենդեսի զեկույցները, Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտի, Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության⁹⁶, ինչպես նաև առանձին

93 *Stu Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro: Case Concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Judgment (26 Feb 2007)*, www.icj.org (մուտք՝ 3.11.2023):

94 *Stu Rosenberg Sh.*, *Genocide Is a Process, Not an Event*, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 20:

95 Եզակի հաջողված օրինակներից է 2007 թվականի դեկտեմբերի 27-ին Քենիայում տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո ծագած քաղաքական ձգնաժամի հանգուցալուծումը: Ընտրությունների արդյունքները վիճարկվեցին և սկսվեցին բախումներ գործող նախագահի էթնիկ խմբի՝ կիկույուների և նրա հակառակորդին ներկայացնող լուոների միջև: Էթնիկ հողի վրա հիմնված բռնությունը հնարավոր դարձավ կանգնեցնել միջազգային արագ և ակտիվ ներգրավվածությամբ: Նայրոբի եկան միջազգային առաջնորդներ՝ ՄԱԿ-ի նախկին քարտուղար Քոֆի Աաննի և ԱՄՆ Պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի գլխավորությամբ: Տե՛ս օրինակ, *Hull B.*, *Cawthorne A.*, *Kenya govt denounces 'genocide' as toll hits 300*, Reuters, հունվարի 2, 2008, <https://www.reuters.com/article/us-kenya-election/kenya-govt-denounces-genocide-as-toll-hits-300-idUSL277107920080102>, *Annan leads Kenyan crisis talks*, BBC, <http://news.bbc.co.uk/2/hi/africa/7215673.stm> (մուտք՝ 3.11.2023):

96 Օկամպոյի զեկույցը՝ https://luismorenoocampo.com/lmo_en/report-armenia/ (մուտք՝ 3.11.2023), Մենդեսի զեկույցը՝ տե՛ս https://un.mfa.am/file_manager/un_mission/Preliminary%20Opinion%20-%202023.08.2023.pdf, Լեմկինի ինստիտուտի զեկույցը՝

գիտնականների կողմից հրապարակած փաստաթղթերը ոչ միայն ակնառու են դարձնում Արցախի թեման ցեղասպանագիտական քննարկումներում, այլև ինքնին մեծ ներդրում են ցեղասպանությունները կանխարգելելու գործում: Գիտնականները փորձում են իրենց ներդրումն ունենալ տարատեսակ մոդելներ մշակելով և ցեղասպանություն երևույթի էությունն առավելապես բացահայտելով: Սակայն, ցավոք, ի հեճուկս Արցախում հնարավոր ցեղասպանական գործողությունների վերաբերյալ տարբեր փորձագետների և միջազգային կազմակերպությունների հորդորների, քաղաքական գետնի վրա ոչ մի գործողություն չիրականացվեց:

Միջազգային տարբեր կազմակերպություններ բավարարվեցին միայն մտահոգություն հայտնելով, իսկ ՄԱԿ-ի ԱԽ-ում տեղի ունեցած քննարկումներն ընդամենը կողմերի կարծիքների փոխանակման վերածվեցին⁹⁷: Ռուանդայում ընթացող ցեղասպանության ժամանակ նույնպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը օրեր էր անցկացնում քննարկումներում՝ գործնական քայլեր ձեռնարկելու փոխարեն⁹⁸: ՄԱԿ-ի ԱԽ-ում երկարատև քննարկումներն այն հարցի շուրջ, թե արդյո՞ք այդ երկրում տեղի ունեցող վայրագությունները կարելի է անվանել ցեղասպանություն⁹⁹ սովերեցին կատարվող ողբերգության չափերը: Վերջին հաշվով, արդյո՞ք դա առաջնային կարևորություն ունի: Մի՞թե մարդու իրավունքների զանգվածային խախտումները չպետք է դառնան միջամտության պատճառ¹⁰⁰:

<https://www.lemkininstitute.com/armeniaproject/report%3A-risk-factors-and-indicators-of-the-crime-of-genocide-in-the-republic-of-artsakh%3A-applying-the-un-framework-of-analysis-for-atrocity-crimes-to-the-nagorno-karabakh-conflict> Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության կողմից՝ տե՛ս <https://genocidescholars.org/wp-content/uploads/2023/02/IAGS-EB-AB-Statement-on-Azeri-Blockade-of-Artsakh.pdf>, https://genocidescholars.org/wp-content/uploads/2022/10/IAGS-EB-Statement-Armenia-Azerbaijan-Oct-2022_update.pdf, 52 հայտնի ցեղասպանագետների հայտարարությունը տե՛ս <http://genocide-museum.am/eng/11.8.23.php>:

97 ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում 2023 թ. սեպտեմբերի 21-ին տեղի ունեցած քննարկումը տե՛ս այստեղ <https://press.un.org/en/2023/sc15418.doc.htm> (մուտք՝ 3.11.2023):

98 Տե՛ս **Barnett M.**, The UN Security Council, Indifference, and Genocide in Rwanda, “Cultural Anthropology”, N 12 (4), 1997, էջ 551-578, **Keating C.**, Rwanda: the Political Failure of the UN Security Council, “Journal of International Peacekeeping”, 22, 2018, էջ 17–39:

99 Վերջին շրջանում չափազանց շատ է օգտագործվում «Էթնիկ գտում» եզրույթը, որը չունի հստակ իրավական սահմանում: Քուլին Թաթսը հարց է բարձրացնում, արդյոք մենք կարող ենք ասել, որ էթնիկ գտումը երբեք չի վերածվում ցեղասպանության և, տալով բացասական պատասխան, տարակուսում է, թե ինչու ենք մենք այդ դեպքում դեռ օգտագործում այդ եզրույթը: Հետևությունը մեկն է՝ ցեղասպանությունը ավելի մեղմ բնորոշմամբ նկարագրելու համար: (Տե՛ս **Tatz C.**, Genocide Studies: An Australian Perspective, “Genocide Studies and Prevention”, N 6 (3), 2011, էջ. 233):

100 Տե՛ս **Theriault H.**, Against the Grain: Critical Reflections on the State and Future of Genocide Scholarship, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 140–141:

Ընդ որում, երբ խոսում ենք կանխարգելման մասին, պետք է հիշել, որ այն վերաբերվում է ոչ միայն այն տարածքներին, որտեղ բարձր է ցեղասպանության հավանականությունը, այլ նույնիսկ այն երկրներին, որտեղ նման զանգվածային կոտորածներ չեն կախնատեսվում: Նույնիսկ նման պետություններում ամենօրյա աշխատանք է անհրաժեշտ այլատյացությունը, առանձին խմբերի թիրախավորումը, ատելության երևույթները բացառելու համար:

Օրինակ, ԱՄՆ-ում բռնության ալիք անցավ Դ. Թրամփի կառավարման շրջանում: Երկրի ներսում պառակտում սկսվեց հասարակության տարբեր շերտերի միջև: Հանրապետական կուսակցությունը ներկայացնող նախագահը սկսեց պայքար ապօրինի ներգաղթյալների դեմ: Նրա քաղաքականությունը, որը թիրախավորում էր շատերին, ստացավ հակառակ քաղաքական ճամբարի՝ դեմոկրատների համակիրների մոտ: Ի հայտ եկավ նույնիսկ բանավեճ պատմական հարցերի շուրջ¹⁰¹, երկրով մեկ շրջվեցին ամերիկյան քաղաքացիական պատերազմի հերոսների արձանները¹⁰², քանի որ նրանցից շատերը ստրկատիրության պաշտպաններ էին: Երբ 2020 թվականի մայիսի 25-ին 46-ամյա մի սևամորթ տղամարդ՝ Ջորջ Ֆլոյդը սպանվեց ոստիկանության կողմից՝ Միննեապոլիսում, երկրում մեծ թափ ստացավ «Մև կյանքերն արժեքավոր են» շարժումը (Black Lives Matters), որը բերեց մեծածավալ ռասսայական բախումների: Այս ամբողջ լարվածությունը կարող է բերել նույնիսկ ցեղասպանական բռնության, ինչպես կարծում է ամերիկյան մարդաբան Ալեքս Հինթոնը¹⁰³: Այսինքն, կանխարգելումը պետք է լինի ամենուրեք և մշտապես իրականացվող մի աշխատանք, և ցեղասպանագիտությունը շարունակական քննարկման մեջ է նրա համար գործիքներ և մեթոդներ ստեղծելու նպատակով:

Այսպիսով, պետք է ընդգծել, որ տեսության և կանխարգելման իրական հնարավորությունների չափազանց պարզեցումը վտանգավոր

101 Բանավեճի մասին հոդվածների ցանկը տե՛ս Historians on the Confederate Monument Debate, <https://www.historians.org/news-and-advocacy/everything-has-a-history/historians-on-the-confederate-monument-debate> (մուտք՝ 3.11.2023):

102 Տե՛ս **Fisher M.**, Confederate statues: In 2020, a renewed battle in America’s enduring Civil War, “Washington Post”, հունիսի 11, 2020, <https://www.washingtonpost.com/history/2020/06/11/confederate-statues-attacked-protesters-george-floyd/> (մուտք՝ 3.11.2023), **Newkirk II V.**, Growing Up in the Shadow of the Confederacy, “The Atlantic”, օգոստոսի 22, 2017, <https://www.theatlantic.com/politics/archive/2017/08/growing-up-in-the-shadow-of-the-confederacy/537501/> (մուտք՝ 3.11.2023):

103 Տե՛ս **Hinton A.**, It Can Happen Here: White Power and the Rising Threat of Genocide in the US, New York University, 2021:

է¹⁰⁴: Չի կարելի ասել, որ կանխարգելման մոդելների ստեղծման աշխատանքը հաջող է ընթացել՝ դիտարկելով միայն այն մեծ ներուժը, ժամանակն ու միտքը, որ ներդրվել է դրա մեջ: Այստեղ գոյություն ունի մի քանի խնդիր:

Նախ իրավիճակի մշտադիտարկումը պահանջում է մեծ թվով մասնագետներ, որոնք ներկա պահին չկան: Սովորաբար, վաղ նախագգուշացման ազդանշանները տեսնում են նախ և առաջ լրագրողները, որոնք հետևում են զարգացումներին ամենօրյա ռեժիմով: Թեև ոմանք հաջողությամբ դա անում են, սակայն, մեծ հաշվով, լրագրողները հատուկ պատրաստվածություն չունեն հնարավոր վտանգները վերծանելու համար, և, ընդհանրապես դա իրենց հիմնական պարտականությունը չէ: Որպես հետևանք կարող է լինել բռնությունների սխալ գնահատումն ու մեկնաբանությունը:

Այս աշխատանքն առավել արդյունավետ կարող են իրականացնել ցեղասպանագետները, ովքեր, կիրառելով իրենց փորձն ու գիտելիքները, կարող են պարզել՝ արդյո՞ք կատարվածը կարող է տանել դեպի ցեղասպանություն, թե՞ ոչ: Եթե մասնագետները ներկա լինեն հակամարտությունների կամ բռնությունների շրջաններում, իրականացնեն հետազոտություն, վերահսկեն զարգացումները հենց տեղում, ծանոթանան տեղական մշակույթի հետ, հասկանան հիմնական խաղացողների գործողությունների տրամաբանությունը, նրանց անձնական հատկանիշներն ու մոտիվները, հակամարտության պատմությունը, ընթացքը, զինված մարդկանց առկայությունն ու տեղաշարժերը, ունենան պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումներ հանրության տարբեր խմբերը ներկայացնող անձանց հետ, հետևեն պաշտոնական բառապաշարին և հայտարարություններին, կկարողանան ձեռք բերել եզակի տեղեկատվություն, որն այլ կերպ ստանալ անհնար է: Իսկ այսօրվա տեխնոլոգիաների զարգացումը թույլ է տալիս այս վերահսկողությունն իրականացնել առավել արդյունավետ՝ արբանյակային դիտարկումների, բջջային հեռախոսների, համացանցի, սոցիալական մեդիայի միջոցով, որոնք նաև հնարավոր կդարձնեն արագ կերպով արձագանքել կատարվող իրադարձություններին¹⁰⁵: Իսկ ցեղասպանության սպառնալիք պարոնակող ցանկացած առաջին իսկ ազդանշանի դեպքում պետք է գործի դրվեն ՄԱԿ-ի, ոչ կառավարական կազմակերպությունների և հակամարտությունների լուծման մասնագետների համաձայնեցված ջանքերը:

104 Տե՛ս **Feierstein D.**, Leaving the Parental Home: An Overview of the Current State of Genocide Studies, "Genocide Studies and Prevention", N 6 (3), 2011, էջ 623:

105 Տե՛ս **Totten S.**, The State and Future of Genocide Studies and Prevention: An Overview and Analysis of Some Key Issues, "Genocide Studies and Prevention", N 6 (3), 2011, էջ. 223:

Հաջողության համար կարևոր է հաղթահարել ցեղասպանության կանխարգելման առաջ ծառայած կարևոր խոչընդոտներ (օրինակ՝ realpolitik-ը, քաղաքական կամքի բացակայությունը, տնտեսական շահերը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում գոյություն ունեցող հակասությունները, հինգ մշտական անդամների վետոյի իրավունքը, որը տարիներ շարունակ կանխում է գործողությունների անմիջական իրականացումը, միջազգային իրավունքի նորմերը, իրականացման գործընթացի անկատարությունը, ուշացած արձագանքը¹⁰⁶։

8. Միկրո մակարդակի ուսումնասիրություններ

Ցեղասպանագիտական հետազոտությունները սկզբնական շրջանում հիմնականում կենտրոնացած էին մեծ պատումների ստեղծման վրա։ Ոլորտում ներգրավված գիտնականները ձգտում էին նկարագրել տարբեր ցեղասպանությունների պատմությունները հնարավորին չափ ամբողջական ձևով։ Այդպիսին էին, օրինակ, քաղաքագետ, Հոլոքոստի ուսումնասիրությունների հիմնադիրներից Ռաուլ Հիլբերգի՝ «Եվրոպական հրեության ոչնչացումը»¹⁰⁷ կամ Վահագն Դադրյանի «Հայոց ցեղասպանության պատմությունը»¹⁰⁸ աշխատությունները։

Սա կարևոր և անհրաժեշտ աշխատանք էր, քանի որ մինչև տարբեր ցեղասպանություններին վերաբերող մասնավոր թեմաների քննությունը, անհրաժեշտ էր ուրվագծել ցեղասպանությունների հնարավորինս համապարփակ պատկերը՝ համատեքստը, պատճառները, ընթացքը, գործող անձանց, աշխարհաքաղաքական զարգացումները և հետևանքները։ Դրանք մակրոմակարդակի ուսումնասիրություններն են։

Հետազոտողներ Եվգենի Ֆինկելը և Սքոթ Սթրաուսը ցեղասպանագիտության մակրո ուսումնասիրությունները բաժանել են վեց մեծ հոսանքների՝ (1) միջխմբային հարաբերություններ, (2) ռեժիմի տեսակ, (3) քաղաքական ցնցումներ, (4) գաղափարախոսություն, (5) առաջնորդների ռազմավարություն և (6) արդիականություն և զարգացում¹⁰⁹։

Նրանք, պատճառաբանելով նման բնույթի հետազոտությունների բուռն զարգացումը նախորդած տասնամյակներում, նշում են, որ ցեղա-

106 St' u Theriault H., Against the Grain: Critical Reflections on the State and Future of Genocide Scholarship, "Genocide Studies and Prevention", N 7 (1), 2012, էջ 140-141:

107 St' u Hilberg R., The Destruction of the European Jews, New Viewpoints, 1973:

108 St' u Dadrian V., The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Berghahn Books, 2003:

109 St' u Finkel E., Straus S., Macro, Meso, and Micro Research on Genocide: Gains, Shortcomings, and Future Areas of Inquiry, "Genocide Studies and Prevention", N 7 (1), 2012, էջ 57:

սպանությունները, սովորաբար, վերևից ներքև ընթացող գործընթացներ են, որոնցում պետությունները զանգվածային բռնության նախաձեռնողներն ու հեղինակներն են, հետևաբար ցեղասպանության հիմքերը հենց այս մակարդակի վրա ուսումնասիրելը բնական էր համարվում¹¹⁰: Սակայն վերջին շրջանում մակրոմակարդակի հետազոտությունների թիվն այլևս գերակշռող չէ: Կարելի է ասել, որ մեծ նարատիվների ստեղծման ժամանակաշրջանն ավարտվել է, մենք, ամեն դեպքում, ունենք պատկերացում, թե ինչպես են տեղի ունեցել մեծ ցեղասպանությունները: Այժմ գիտական ուսումնասիրության դաշտ են մտնում մեծ թվով աշխատանքներ, որոնք կարելի է անվանել միկրո-պատմություններ կամ միկրո-հետազոտություններ:

Դրանք հանդես են գալիս հիմնականում երկու տեսքով. կամ վերլուծության առարկա է դառնում կոնկրետ գործող անձի կյանքի և գործունեության պատմությունը, կամ ուսումնասիրությունը վերաբերում է որոշակի աշխարհագրական տեղանքի խորը հետազոտությանը:

8.1. Մարդկանց և նրանց սոցիալական վարքի ուսումնասիրություն

Խոսելով ցեղասպանության մասին՝ պետք է հիշել, որ այն նախաձեռնվում և իրականացվում է մարդկանց կողմից: Ջոհերը նույնպես մարդիկ են, որոնք թիրախավորվում են ոչ թե իրենց արարքների, այլ ծագման պատճառով: Հետևաբար, մարդու և սահմանային, ձգնաժամային իրավիճակներում հայտնված մարդկանց վարքի ուսումնասիրությունը դառնում է շատ կարևոր: Այս քննության մեջ մեծապես կիրառվում են սոցիոլոգիայի և հոգեբանության ընձեռած հնարավորությունները և գործիքակազմը:

Վերջին տարիներին բուռն զարգացում է ապրում առաջին հերթին ոճրագործների ուսումնասիրությունը: Ավելին, ցեղասպանագիտության մեջ առաջացել է մի ճյուղավորում՝ perpetrator studies, որը կոչված է քննության ենթարկել ցեղասպան-հանցագործներին՝ որոշում կայացնողներին, պետական ապարատի ներկայացուցիչներին և շարքային մարդասպաններին: Ուսումնասիրվում են նրանց մասնակցության դրդապատճառները, հանցագործի վարքը իրավական, քաղաքական, պատմական, փիլիսոփայական և մշակութային տեսանկյուններից, ինչպես նաև նրանց մասին ընկալումների փոփոխությունները ժամանակի ընթացքում և տարբեր աշխարհագրական և մշակութային

110 Տե՛ս **Finkel E., Straus S.**, Macro, Meso, and Micro Research on Genocide: Gains, Shortcomings, and Future Areas of Inquiry, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 58:

սահմանների մեջ: Այս թեմաներն ուսումնասիրող գիտնականները նույնիսկ ունեն իրենց միավորող ցանցը¹¹¹ ու հրատարակում են գիտական հանդես¹¹²:

Հոլոքոստից հետո տարբեր ուսումնասիրություններ ելնում էին այն կանխադրույթից, որ այն իրականացրել են հոգեկան շեղումներ ունեցող անձինք: Մարդկանց համար այդ ընկալումն ավելի հարմար էր, քանի որ դրանից կարող էր հետևել նման մարդկանց բարձր պաշտոններից հեռու պահելու միջոցով խնդրի լուծումը: Այս սկզբնական պատկերացումները բնորոշ են բոլոր ցեղասպանություններին: Հայոց ցեղասպանությունից հետո գրված տարբեր հուշերում նույնպես ոճրագործներին ներկայացնում էին հաճախ իբրև բարբարոսներ՝ մարդկային տեսք ընդունած չարիքի մարմնավորում:

Այս պատկերը փոխվեց 1960-ականներին, երբ Երուսաղեմում տեղի ունեցավ Էսէս-ի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Ա. Այխմանի դատավարությունը: Նրա հիմնական գործառույթը հրեաների զանգվածային տեղահանությունը կազմակերպելն էր՝ գետտոներում կենտրոնացնելը, հետագայում՝ այնտեղից մահվան ճամբարներ ուղարկելն ու բնաջնջելը: Գերմանիայի պարտությունից հետո Ա. Այխմանին հաջողվեց թաքնվել Բուենոս Այրեսում, որտեղ էլ նրան բացահայտեցին և 1960 թ. մայիսի 11-ին առևանգեցին իսրայելական հատուկ ծառայությունները¹¹³: Դատավարությանը ներկա է գտնվել նաև քաղաքական տեսաբան Հաննա Արենդտը, ով իր տպավորություններն ամփոփել է «Այխմանը Երուսաղեմում» գրքում: Արենդտի համար ամենասարսափելին ոչ թե Այխմանի արտառոց էությունն էր, այլ հակառակը՝ նրա՝ բոլորովին սովորական մարդ լինելը: Այխմանի գործերը հրեշավոր էին, բայց նա միանգամայն սովորական մարդ էր: Արենդտի այս հետազոտությունը գիտական շրջանառություն ներմուծեց հասարակ մարդասպան հասկացությունը¹¹⁴:

Հետագայում նրա պնդումներն ամրապնդեցին սոցիալական հոգեբաններ Սթենլի Միլգրամի և Ֆիլիպ Զիմբարդոյի գիտափորձերը, որոնք բացատրում էին, թե ինչպես և ինչու սովորական մարդիկ կարող են որո-

111 Ոճրագործներին ուսումնասիրող ցանցի կայքէջը <https://perpetratorstudies.sites.uu.nl/> (մուտք՝ 3.11.2023):

112 Ոճրագործներին ուսումնասիրությունների հանդես բնագրով <https://jpr.winchesteruniversitypress.org/> (մուտք՝ 3.11.2023):

113 Տե՛ս **Malkin P., Stein H.**, Eichmann in My Hands: A First-Person Account by the Israeli Agent Who Captured Hitler's Chief Executioner, Open Road Media, 2018:

114 Տե՛ս **Arendt H.**, Eichmann in Jerusalem: A Report on the Banality of Evil, Viking Press, 1963:

շակի վարքագիծ դրսևորել, որոշակի իրավիճակներում և պայմանների ազդեցության տակ նույնիսկ վնասել այլ մարդկանց¹¹⁵:

Հաջորդ հիմնական հարցը, որի պատասխանը փնտրում են գիտնականները, դա հասարակ մարդկանց ներգրավման պատճառներն են: Հայտնի սոցիոլոգ Մայքլ Մանն առաջարկում է ինը պատճառ և դրանցից ամանցյալ ոճրագործների տեսակներ.

1. Գաղափարական ոճրագործներ, ովքեր հավատում էին, որ սպանություններն անհրաժեշտություն են՝ ելնելով որոշակի գաղափարախոսությունից¹¹⁶,
2. Մոլեռանդ հանցագործներ, ովքեր որոշակի նախապաշարմունքների հետևանքով ատում էին փոքրամասնություններին,
3. Դաժան մարդասպաններ, ովքեր անմիջականորեն մասնակցում են սպանություններին և սադիստական հակումներ դրսևորում¹¹⁷:
4. Վախից դրդված ոճրագործներ, ովքեր կատարում են հրահանգները սպառնալիքի ներքո¹¹⁸:
5. Կարիերիստ ոճրագործներ, որոնց ակնկալիքը կարիերայի աճն է: Այս տեսակն առավել տարածված է բյուրոկրատների շրջանում:
6. Նյութապաշտ ոճրագործներ, ովքեր հետապնդում են կոնկրետ տնտեսական շահ¹¹⁹:
7. Կարգապահ ոճրագործներ, ովքեր ենթարկվում են հրամաններին և ցանկացած շեղում հրահանգներից դիտարկում են անընդունելի¹²⁰:
8. Ընկերական շրջապատի ճնշմանը ենթարկվող ոճրագործներ, ովքեր ազդվում են խմբի ճնշումների ներքո:¹²¹

115 Տե՛ս **Milgram S.** Obedience to Authority; An Experimental View, Harper collins, 1974, **Zimbardo P.**, The Lucifer Effect: Understanding How Good People Turn Evil, Random House Trade Paperbacks, 2008:

116 Տե՛ս **Mann M.**, The Dark Side of Democracy: Explaining Ethnic Cleansing, Cambridge University Press, 2004:

117 Տե՛ս **Arakelyan A., Diehl G.**, Sadistic Pleasures: Silent Crimes of Azerbaijan, Identity Publications, 2022:

118 Տե՛ս **Staub E.**, The Roots of Evil: The Origins of Genocide and Other Group, Cambridge University Press, 1992, **Uvin P.**, Aiding Violence: The Development Enterprise in Rwanda, Kumarian Press, 1998, **Straus S.**, The Order of Genocide: Race, Power, and War in Rwanda, Cornell University Press, 2008:

119 Տե՛ս **Aly G.**, Hitler's Beneficiaries: Plunder, Racial War, and the Nazi Welfare State, Picador, 2008, **Akçam T., Kurt U.**, The Spirit of the Laws. The Plunder of Wealth in the Armenian Genocide, Berghahn Books, 2015:

120 Տե՛ս **Browning C.**, Ordinary Men: Reserve Police Battalion 101 and the Final Solution in Poland, New York, Harper Perennial, 1998

121 Տե՛ս **Goldhagen D.**, Hitler's Willing Executioners; Ordinary Germans and the Holocaust, Abacus, 1997, **Fujii L.**, Killing Neighbors: Webs of Violence in Rwanda, Cornell University Press, 2011, **Westermann E.**, Drunk on Genocide: Alcohol and Mass Murder in Nazi Germany, Battlegrounds: Cornell Studies in Military History, 2021:

9. Բյուրոկրատ ռճրագործներ, որոնց լավագույն օրինակը տալիս են հենց Արենդտի «չարի առօրեականության» մասին աշխատությունը կամ Միլգրամի հետազոտության արդյունքները:

Իհարկե, գրեթե բոլոր դեպքերում ռճրագործների վարքը պատճառաբանված է մեկից ավելի դրդապատճառներով: Սակայն, երբ ցեղասպանությունից հետո նրանք կանգնում են արդարադատության առջև, հրապարակային արդարացումները բոլորովին այլ բնույթ են ստանում: Բոլոր նրանք, ովքեր մասնակցել են ցեղասպանությանը, միշտ փորձում են կամ ժխտել այն, կամ գտնել արդարացումներ, որոնց թվում ամենատարածվածներն են հրամաններին անվերապահորեն ենթարկվելը, կամ իրենց արարքների հետևանքների չինացությունը:

Այս դրդապատճառների ուսումնասիրությունը դառնում է բազմաթիվ աշխատանքների թեմա¹²²: Միաժամանակ, մենք ականատես ենք լինում միկրոպատմությունների մեկ այլ ճյուղավորման՝ զոհաբանության (victimology) մուտքին ցեղասպանագիտության ոլորտ: Իհարկե, զոհաբանությունը նոր գիտաճյուղ չէ և հայտնի է տարբեր հետազոտություններով: Այն առաջացել է դեռ 20-րդ դարի սկզբին՝ որպես միջառարկայական մի գիտաճյուղ քրեագիտության, հոգեբանության, սոցիոլոգիայի և ազգագրության հատման կետում: Այն ուսումնասիրում է զոհերի վարքը, նրանց հակվածությունը՝ դառնալու հանցագործության թիրախ, զոհերի հարաբերությունները հանցագործների հետ: Սակայն վերջին շրջանում այն ակտիվորեն ներթափանցում է նաև ցեղասպանագիտական ուսումնասիրությունների ոլորտ, երբ հետազոտությունների թեմա են դառնում ցեղասպանության զոհերը, ինչպես առանձին խմբեր (կայանք, երեխաներ, ուղեկցող զոհեր), այնպես էլ՝ անհատներ¹²³: Ամենահայտնի օրինակներից են Աննա Ֆրանկի վերաբերյալ հետազոտությունները՝ Հոլոքոստի պարագայում և

122 Տե՛ս Ordinary People as Mass Murderers: Perpetrators in Comparative Perspectives (ed. by **Jensen O., Szejmann C.**), London: Palgrave Macmillan, 2008, **Hinton A.**, Why Did They Kill?: Cambodia in the Shadow of Genocide, Berkeley: University of California Press, 2005, **Waller J.**, Becoming Evil: How Ordinary People commit Genocide and Mass Killing, New York: Oxford UP, 2002, **Robben A., Hinton A.**, Perpetrators: Encountering Humanity's Dark Side, Stanford University Press, 2023, **Williams T.**, The Complexity of Evil. Perpetration and Genocide, New Brunswick: Rutgers University Press, 2021, Researching Perpetrators of Genocide (ed. by **Anderson K., Jessee E.**), University of Wisconsin Press, 2020:

123 Տե՛ս **García M.**, Challenging Violence and Victimisation Discourses in International Relations. The experiences of Men and Women during the Rwandan Genocide, *Femeris: Revista Multidisciplinar de Estudios de Género*, N 3 (1), 2018, էջ 94-110, **Grover S.**, Child Soldier Victims of Genocidal Forcible Transfer: Exonerating Child Soldiers Charged With Grave Conflict-related International Crimes, Springer, 2012, **Berkhoff K.**, The "Russian" Prisoners of War in Nazi-Ruled Ukraine as Victims of Genocidal Massacre, "Holocaust and Genocide Studies", N 15 (1), 2001, **Ferstman C., Goetz M.**, Reparations for Victims of Genocide, War Crimes and Crimes against Humanity, Brill, 2009:

Ավրորա Մարդիգանյանի կամ Կոմիտասի կյանքի վերլուծությունները¹²⁴: Այս ուսումնասիրություններին կարելի է ավելացնել նաև վերապրողների անհատական պատմությունների, հուշերի և օրագրերի հրատարակությունները և քննական վերլուծությունները¹²⁵:

Ֆինքելն ու Սթրաուսը անհատների պատմությունների հետաքննությունները բաժանում են հետևյալ վեց հիմնական ձևերի.

1. ցեղասպանության ընթացքում գործող անձանց կենսագրությունների կամ սոցիալական կազմի ուսումնասիրություններ՝ դատական փաստաթղթերի, մամուլի լուսաբանման և/կամ իրադարձությունների մասին այլ պատմական աղբյուրների միջոցով¹²⁶:

Սրա օրինակներից կարելի է համարել Քրիստոֆեր Բրաունինգի հետազոտությունը, ով Շտուտգարտի մոտ գտնվող Պետական կառավարման դատական մարմինների կենտրոնական գրասենյակում (Zentrale Stelle der Landesjustizverwaltungen), հանդիպելով Հոլոքոստի ժամանակ հրեական գյուղերի բնակչությանը կոտորած հատուկ գումարտակի զինվորների անձնական գործերին և հարցաքննության սղագրություններին, մի փայլուն ուսումնասիրություն իրականացրեց: Իր աշխատանքում նա ներմուծել է հասարակ մարդկանց կողմից իրականացված արտառոց հանցագործության դրույթը և փորձել է բացատրել շարքային քաղաքացիների իշխանություններին ենթարկվելու սոցիալ-հոգեբանական մոդելը¹²⁷: Նույն բնույթի գիրք է Սլավենկա Դրակուլիչի գիրքը, որը, հիմնվելով Հարավսլավիայի գծով Միջազգային դատարանի նյութերի վրա, շարադրում է Գորան Զելիչիչի՝ մի հասարակ սերբ երիտասարդի պատմությունը, ով պատերազմի

124 Տե՛ս **Sullivan R.**, *The Betrayal of Anne Frank*, HarperCollins, 2021, Slide A., *Ravished Armenia and the Story of Aurora Mardiganian*, University Press of Mississippi, 2014, հետաքրքիր է նաև **Akcam T.**, *The Chilingirian Murder: A Case Study from the 1915 Roundup of Armenian Intellectuals, Holocaust and Genocide Studies*, N 25 (1), 2011, էջ 127–143:

125 Այսպես, օրինակ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը սկսել է իր արխիվում պահվող վերապրողների հուշագրությունների գիտական հրատարակությունը: Վերջին հրատարակված հուշերն են՝ **Միքայել Բարթիկյան**, Արնաշաղախ Իգվիրը, **Օհանէս (Օսնիկ) Ղազերեան**, Կենսագրական նոթեր, խմբագիր, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ Թեմինե Մարտոյան, Եր, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, «Պրինտարմ», 2022, **Գառնիկ Կ. Պոստուռեան**, Տարագրի յուշեր 1915–1917, խմբագիր, յառաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ **Միհրան Ա. Մինասեան**, Եր, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, «Պրինտարմ», 2022:

126 Տե՛ս **Browning C.**, *Ordinary Men: Reserve Police Battalion 101 and the Final Solution in Poland*, New York, Harper Perennial, 1998, **de Mildt D.**, *In the Name of the People: Perpetrators of Genocide in the Reflection of Their Post-War Prosecution in West Germany: The ‘Euthanasia’ and ‘Aktion Reinhard’ Trial Cases*, The Hague: Martinus Nijhoff, 1996):

127 Տե՛ս **Browning C.**, *Ordinary Men: Reserve Police Battalion 101 and the Final Solution in Poland*, New York, Harper Perennial, 1998.

ժամանակ վերածվել էր կալանավայրի ղեկավարի, որտեղ հավանաբար խոշտանգել և գնդակահարել էր հարյուրավոր բռնահացիների¹²⁸:

2. Մանրամասն հարցազրույցների միջոցով իրականացված հետազոտություններ ընտրված հանցագործների հետ¹²⁹:

3. Որոշակի դերակատարների կյանքի համապարփակ վերականգնում¹³⁰, որի լավ օրինակ է շվեյցարացի հեղինակ Հանս Լուբաս Կիզերի հեղինակած Մեհմեդ Թալեթի ամբողջական կենսագրությունը¹³¹: Նաև կարելի է առանձնացնել Արսեն Ավագյանի ուսումնասիրությունը Դեյր Ջորի կառավարիչ Սալիհ «Հրեշ» Ջեքիի մասին¹³²:

4. Աշխատանքներ, որոնք հիմնված են փորձարկումների վրա¹³³,

5. Հարցումների վրա հիմնված հետազոտություններ¹³⁴,

6. Համայնքի վրա հիմնված ուսումնասիրություններ, որոնք դիտարկումներ են անում անհատական մակարդակի մոտիվացիաների վերաբերյալ¹³⁵:

8.2. Տեղավայրերի ուսումնասիրություններ

Բացի անհատների գործողությունների քննությունից, միկրո մակարդակի ուսումնասիրությունները նաև ներառում են առանձին վայրերում՝ գյուղերում, քաղաքներում կամ նահանգներում իրականացված ցեղասպանական գործողությունների վերլուծությունը:

128 Տե՛ս **Drakulić S.**, They Would Never Hurt A Fly: War Criminals on Trial in The Hague, New York: Viking, 2004 ըստ **Üngör U.**, Studying Mass Violence: Pitfalls, Problems, and Promises, “Genocide Studies and Prevention” N 7 (1), 2012, էջ 77, **Hinton A.**, Man or Monster?: The Trial of a Khmer Rouge, Duke University Press, 2016:

129 Տե՛ս **Fujii L.**, Killing Neighbors: Webs of Violence in Rwanda, Cornell University Press, 2011, **Lifton R.**, The Nazi Doctors: Medical Killing and the Psychology of Genocide, New York: Basic Books, 1986; **Hinton A.**, Why Did They Kill?: Cambodia in the Shadow of Genocide, Berkeley: University of California Press, 2005:

130 Տե՛ս **Cesarani D.**, Eichmann: His Life and Crimes, London: Heinemann, 2004, **Primomo J.**, Architect of Death at Auschwitz: A Biography of Rudolf Hoss, McFarland, 2020, **Longerich P.**, Goebbels: A Biography, HighBridge, 2015, **Short Ph.**, Pol Pot: The History of a Nightmare, John Murray Publishers, 2005:

131 Տե՛ս **Kieser H.**, Talaat Pasha: Father of Modern Turkey, Architect of Genocide, Princeton University Press, 2020:

132 Տե՛ս **Avagyan A.**, Karanlikta Kalmis Bir Eylemci: Ittihatci Komünist Salih Zeki (Kusarkov), Sosyal Tarih Yayinlari, 2020:

133 Տե՛ս **Milgram S.**, Obedience to Authority: An Experimental View, New York: Harper & Row, 1974, **Zimbardo P.**, The Lucifer Effect: Understanding How Good People Turn Evil, New York: Random House, 2007:

134 Տե՛ս **McDoom O.**, The Micro-Politics of Mass Violence, Who killed in Rwanda’s genocide? Micro-space, Social Influence and Individual Participation in Intergroup Violence, “Journal of Peace Research”, N 50 (4), 2013, էջ 453-467:

135 Տե՛ս **Finkel E.**, **Straus S.**, Macro, Meso, and Micro Research on Genocide: Gains, Shortcomings, and Future Areas of Inquiry, “Genocide Studies and Prevention”, N 7 (1), 2012, էջ 61-62:

Դա չափազանց հետաքրքիր ու կարևոր է, քանի որ յուրաքանչյուր բնակավայրում կոտորածը կամ տեղահանությունը, դրա կազմակերպումն ու իրականացումը տեղի է ունեցել է տարբեր յուրահատկություններով: Տեղական դինամիկայի տարբերության մասին, օրինակ, բարձրաձայնում է Ումիտ Ուզուրը Ռնգորը: Խոսքը հիմնականում «կենտրոնում» որոշումների կայացման և տեղական մակարդակում զանգվածային սպանությունների իրականացման միջև կապի մասին է: Այս առումով շատ կարևոր են խորացված հետազոտություններն այն մասին, թե ինչպես է ծավալվում ցեղասպանության գործընթացն առանձին բնակավայրերում: Դա կարող է շատ նրբություններ բացահայտել այն մասին, թե ինչպես կարող է իշխանության դիրքորոշումն ազդել տեղում ցեղասպանության ընթացքի և ինտենսիվության վրա, որոնք բավականին տարբերվում են շրջանից շրջան:

